

891.99.03

L-96

0-9 p4.

91.542.09[344]. LUCIFER.
h-60

ԱՇԽԱՏԱՆՔԻ=====

ԵՒ ԱՇԽԱՏԱԻՈՐԻ ԳԱ-
ՂԱՓԱՐԸ ԱԴԱՆԵԳՐԻԻ
Յ. ՅԱԿՈԲԵԱՆԻ=====

ԵՒ Շ. ԿՈՒՐՂԻՆԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ-
ՆԵՐԻ ՄԷՋ :=====

Գրականական-ընկա-
րատական էջիդ

13 APR 2011

891.99.09

B. LUCIFER.


L-96

3-4
M

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՒ ԱՇԽԱՏԱ-
ԻՈՐԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԱԴԱՆԵԳ-
ՐԻԻ, Յ. ՅԱԿՈԲԵԱՆԻ ԵՒ
Շ. ԿՈՒՐՂԻՆԵԱՆԻ ԲԱՆԱՍ-
ՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԷՁ==

1002
Cot
Z

(Գրականական-քննադատական էթիկա)



Wer für die Besten seiner Zeit gelebt,
Der hat gelebt für alle Zeiten.

Goethe.

„Я жить хочу,
чтобъ мыслить и
страдать“.

Пушкинъ.

11518



77084

ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՒԱՆ. | Нахичевань н.-л.
Տպարան Ս. Ասազանի. | Типогр. С. Я. Авакова.



ԵՐԿՈՒ ԽՈՍՍՔ.

Համաշխարհային բանւորական շարժումը ներկայումս խոշոր ծաւալ է ստացել։ Այն ժամանակ, երբ այդ շարժման գիտական շտեմարանը հարուստ է, կուռ ու անյաղթ, նրա գեղարւեստական արտայայտութիւնը, ընդհակառակը, թոյլ է ու նւազ։ Դրա պատճառը կարելի է որոնել այն բանի մէջ, որ գեղարւեստը՝ լինելով, մի կողմից, ոչ այնքան մատչելի բարձրութիւն, միւս կողմից էլ, առայժմ ոչ այնչափ կենսական ու անհրաժեշտ մեծութիւն՝ պրօլետարիատի համար, վերջնիս հայեցողութեան շրջանակից մի առժամանակ դուրս է մնացել։

Բանւոր դասակարգը աշխատում է իրականացնել իդէալական աշխարհը, ամենաառաջ՝ ստեղծել մարդկութեան համար գեղեցիկը, քնքոյշը, բոլորովն։ Գեղեցկի խնդիրը տակաւին նրա առաջումն է. իսկ այսօր գեղեցկի շաղախն է միայն, որ պատրաստում է պրօլետարիատը։

Սակայն գեղեցկութեան դադափարը բանւորական խաւերում այսպէս թէ այնպէս ունենալու էր իւր արտայայտումները։

Եւ այդ այդպէս եղաւ։

Հէնց բանահիւսութեան ծոցում ծլեց ու ծաղկեց Ադա-Նեգրիի քնարը, որ որոշ չափով եկաւ նւագելու պրօլետարական չարքաշ դրութիւնը: Աւելի կամ պակաս չափերով պրօլետարական—առնականական լարեր հնչեցին և՛ Ալբրիտի դու երկնակամարի տակ և՛ գիտակից ու կազմակերպւած բանւորական շարժման օրինակի ի հայրենիքում և՛ վառվառն Գաղղիայում և՛ լայնատարած տափարակի խաղաղ դաշտերում:

Փոքրը մեծի յետևորդն է:

Հայկական հորիզոնը միշտ պատած է եղել յետագիմութեան թանձր մառախուղով. հայկական սիրտը կրծակ ու մաշակ է վարշ բացիլն երից. հայութիւնը ընկած է եղել նացիօնալիզմի վառաշոտ ու շարաւոտ գիրկը: Բայց և այնպէս արդի կենսալիւ շարժումը մուտք է գործել և այնտեղ, պրօլետարական դրօշակը այսօր պարզւած է և ամեն ինչը առողջ, բացի իւր սեփականից, այն երկրում, որ Թորգոմի զաւակների հայրենիք է կոչւում:

Պրօլետարական շարժման զուգահեռաբար հրապարակ է դուրս եկել և նրա Մուսան, խորապէս ահօսւած վերջին տարիների համապիտական դէպքերից: Մի շարք անուններ՝ Կուրդինեան, Էմիր, Նորեկ, Յակոբեան, սրնք, ՚ի բաց առեալ վերջինս, համախմբւած են եղել մարքսիստական «Կիանք», «Զայն», «Բանւոր» և «Գործ» թերթերի շուրջը, պրօլետարական քերթողների շարքին են պատկանում:

Նկատենք, որ Էմիր—մեծ մասամբ տարտամ ու անորոշ շեշտերով երգող մի բանաստեղծ—ինչպէս գիտաւոր ասող՝ շուտով թողից Օլիմպիական բարձունք-

ները: Նորեկը ոչ մի ուրոյնութիւն չի ներկայացնում. նա բանւորական—ազատագրական նւագների շնորհալի թարգմանիչն է սոսկ: Մնում են Շ. Կուրդինեան—պրօլետարական քնարի այդ դարդը մեզ մօտ—և Յ. Յակոբեան:

Ընկեր B. Lucifer իւր «Աշխատանքի և աշխատատրի զաղափարը Ադա-Նեգրիի, Յ. Յակոբեանի և Շ. Կուրդինեանի բանաստեղծութիւնների մէջ» անունը կրողը գրւածքում, ժամանակագրական կարգով իրար կողքի է շարել Ադա-Նեգրիին, Յ. Յակոբեանին և Շ. Կուրդինեանին: Նա չի վերլուծում այդ քերթողների երգերը գեղարուեստական սկզբունքի տեսակէտից, այլ պրպտում է նրանց երկերի գաղափարային բովանդակութեան հիմքերը: Հեղինակը դնում է հարցը ոչ թէ գեղագիտական, այլ հասարակագիտական հողի վերայ:

Երեւոյթը նոր է մեր կեանքում:

Ազգային սրբութիւններ կոչւածը, ազգայնական անիմատ ու անարժէք ձգտումները մեր գրականութեան—ընդհանրապէս, և բանահիւսութեան—մասնաւորապէս՝ առատ նիւթ են մատակարարել: Ո՞ր հիշագն բանաստեղծը չի երգել հայի «զարդն ու ցաւը», հայոց գործքերի «գովքն ու փառքը», մի խօսքով՝ այն ամենը, ինչ որ զուտ հայկական է, թթու ազգասիրական:

Գրականութեան զեկավարը, գրականական քնննադատութիւնը—ինչ է ներկայացնում նա հայերիս մօտ՝ չխօսենք այդ մասին—առաջնորդել է հայ կեանքում նոյն յետագէմ սկզբունքերով ու ձգտումներով: Բանահիւսութեան և քննադատութեան միջի արեւա-կցութիւնը շատ սիրտ է եղել: «Արեւն ձայներ»-ն և

հայորդի բանաստեղծների աշուղական լալկան երգերը ունեցել են և իրանց յատուկ տիրացւական քննադատութիւն: Նման զնմանն սիրէ:

Պրօլետարական Մուսան ընկ. B. Lucifer-ի այս աշխատութեամբ, որ իւր տեսակում առաջին փորձն է կազմում մեզ մօտ, մտնում է պրօլետարական քննադատութեան հովանու տակ:

Դժւարը առաջին փորձն է: Այնուհետև ուղին հարթելը հեշտ է:

Իսկ ուղին անհրաժեշտ է հարթել—այն էլ լուրջ ու անդուլ աշխատանքի միջոցով—որպէսզի անպէտքացած ու հին կուռքերը շուտով կործանւեն, օր-առօր տապալւեն:

Օգոստոս, 1909 թ.

Ն. Նախիջևան.

Հրատարակիչ.

I.

Հազիւ կարելի լինի գտնել մի այլ բանաստեղծական երկ, ուր այնքան էջեր նւիրւած լինէին աշխատանքի գաղափարին, այնքան զեղուն ու յորդահոս զգացմունքներ տեղային աշխատանքի վսեմ նըշանակութեան հասցէին, այնքան երգէչը ու փառաբանէր աշխատանքի ստեղծագործող ոյժը և այնքան խնամքով նրբագծէր մարդկային հասարակութեան ստորին խաւի վիշտը, կսկիծներն ու մրմունջները, որքան կարելի է գտնել Ադա-Նեգբրի երկու վտիտ պրակների մէջ:

Քանի գնում, այնքան ուժեղանում, յաճախ է կրկնում այդ առաջնորդող ձգտումը. իսկ երկրորդ պրակում նա դառնում է արդէն տիրապետող գիծը: Իր անմիջական թէ փոխարեական արտայայտութիւն-

ներով, իր գեղեցկահիւս ուրուումներով ու հոլովումներով՝ մեր բանաստեղծունէին նրբին նկարագրում է աշխատանքի ընթացքը, ձևերը, ուրուագծում է աշխատաւորի հոգեկանն ու հոգեբանականը, նրա ծանր կացութիւնը, վիշտն ու տառապանքը: Նա շրջահայեացքով անդրադառնում է աշխատանքի զանազան ձիւղերին (գործարանային-արդիւնադրծական, հանքային, երկրագործական) և աշխատաւորների զանազան խաւերին (բանւոր, բանւորունէի, մանուկ աշխատաւոր): Նրա մուսան պոռոյտ է գործում Ֆիզիքական աշխատանքի մթնոլորդի շատ ու շատ գաղտնի անկիւններ և քաղում իր նիւթն ու հիւթը այդ կենդանի, գերազանց շօշափելի իրականութեան իրական ծոցից, թանձրացեալ պատկերներէից ու երևոյթներէից:

Ազա-Նեգրիին իրաւամբ կարելի է անւանել աշխատանքի երգիչ:

Իր 1 պրակում, առաջին իսկ ոտանաւորի մէջ՝ «Աշխատե՛լ ես դու» վերնագրով, մեր հեղինակը խորոխ ու համարձակ տոնով, լարերի ուժեղ հնչիւններով պարզում է իր leitmotiv-ը, իր բանաստեղծական երկին գաղափարային հիմք ծառայող idee fixe-ը. իր սէրը հայցող, իրենով յափշտակած երիտասարդի մէջ բանաստեղծը ամենից առաջ որոնում է մի բան. —աշխատե՛լ է նա արդեօք, ծանօթ է դարաւոր վշտերի հետ, մաքառե՞լ է բռնաւոր վիճակի գէմ, թէ՞ խուսափել է վտանգից, որ զոհ չտայ իր կեանքը:

«Օ՛, եթէ ես, երբ և իցէ, ըո ձեռքերը տեսնէի
Քիււած, հիւծւած, արիւնլւայ—այդ վիճակից ին-
քնագոհ,

Թէ տեսնէի, որ հեգնանքով դու ատում ես ժանգ
ոսկին,

Սուրբ վաստակով ոգևորւած վերադառնում ան-
կեանքի,

Այն ժամանակ ես քեզանով հպարտացած, քաջարի
Քո զրկանքով, տառապանքով իմ կոյս կուրծքը
կայրէի,

Բայց դու, մեղսոտ կեանքի զաւակ—հաճոյքների
սիրահար,

Չես աշխատել, ապրել ես զուր—կեանքը օտար
քեզ համար.

Դու այնպէս էլ փափայլած ես. բաղդախնդիր
ստահակ.

Կորիք անարգ... քեզ համար ես պահած ունիմ
լուկ զգանք»:

Առաջին հայեացքից կարծես պարագօք է թւում սիրոյ առնդձուծի այդքան հեշտութեամբ լուծումը: Պօէտը մարդկային և ոչ մի յատկութիւն՝ ներքին թէ արտաքին, բացի «կոպիտ» ֆիզիքական աշխատանքից, արժանի չէ համարում կուսակաւ սիրոյ գգանքին ու փափայլանքին:

Սակայն միայն առաջին հայեացքից: Էսպէս վերցրած, անկախ բանաստեղծական թռիչքային երեւակայութեանը յատուկ չափազանցութիւնից, այդտեղ պօէտը հնչեցնում է աշխատանքային սկզբունքի գերազոյն արժէքը, հակադնում վերջինս ձրիակիր տարրի անաշխատ ու «հաճոյքների սիրահար» կեանքին: Այդտեղ սիրոյ խնդիրը ստորադասւում է աշխատանքի խնդրին. առաջինը պայմանաւորւում է եր-

կրորդով.—սիրոյ սուբիեկտը կսիրւի, եթէ նա բաւարարութիւն տայ ամենակարեւոր պահանջին՝ ուղեկցող աշխատել, չմնալ «բաղդախնդիր ստահակ», այլ «ոգեկորած վերադառնայ այլ կեանքի», — ահա ինչ է պահանջում բանաստեղծը նրանից: Դա, աւելացնենք, մի խոշոր պլլուս է Ադա-Նեգրիի ստեղծագործութեան մէջ, եթէ ինկատի ունենանք այն հանգամանքը, որ կան բացառապէս սիրոյ տուփանքը հրգող բանաստեղծներ, որոնք ոչ միայն «սօցիալական հարցը», այլ և ամբողջ աշխարհը կգոհեն՝ «սիրուն, սեռական աղջիկներ ի կրքոտ հայտացքին, քաղցրիկ համբոյրին» — Ֆրիդս-լօգիական հաճոյքին:

Նոյն leitmotiv-ը կրկնուում է Ադա-Նեգրիի մօտ շատ յաճախ զանազան ելեջներով և տարբեր կապակցութիւնների մէջ. օրինակ՝ «Հեթանոսական համբոյր», «Բանտրունին», «Նոր սէր», «Ինչո՞ւ» և այլ ոտանաւորների մէջ:

«Նոր սէր»-ի մէջ կարգում ենք իմիջի այլոց

«Մենք հոգով նման՝ զաղափարակից—»*)

Ահա թէ ինչո՞ւ ես քեզ սիրեցի:

Տանենք աշխարհիս և՛ ցաւ և՛ կսկիծ

Զոհենք ամբոխին, թող նա գոհ լինի»:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, այստեղ բանաստեղծի լայն-մօտիւը հնչում է աւելի բարձր, վսիմ ու խորհրդաւոր տոնով: Աշխատաւոր կամ միայն աշխատաւոր լինելը բաւական չէ, և առհասարակ թերի ու անորոշ պահանջ է, ուղղւած՝ կուսական սէր հայցող, սիրելի ցանկացող սուբիեկտի հասցէին: Որովհետեւ վերջինս կարող է բրտնաթոր աշխատել, իսկա-

*) Ընդգծումը մերն է:

պէս ունենալ «քերած, հիւժւած, արիւնլւայ ձեռքեր» — լինել վերջին պրօլետարը, բայց միաժամանակ անդիտակից, հոգեպէս անբովանդակ, չունենալ այն գաղափարային խմորը իր ներքին աշխարհում, որ պահանջում է այժմ պօէտը, որպէսզի «հոգով նման՝ գաղափարակից, տանեն աշխարհի ցաւն ու կսկիծը, զոհեն ամբոխին» և այլն:

Ադա-Նեգրին բազմակողմանիօրէն, սուր ու թափանցող դիտողութեամբ հնչեցրել է իր քնարը՝ երգելով աշխատանքի կատարման շատ գէպերն ու ձևերը և իրեն՝ աշխատանքի ոյժի տիրոջ — աշխատաւորի — կացութիւնը, յոյզերն ու վիշտը, կսկիծն ու տառապանքը:

Մերթ նա աղօթում է («Մաղթանք») անկողնում պառկած տանջւող ու անօգնական մանուկ բանւորի համար. նա, որ «օր չտեսաւ, վիճակը խեղճի զրկանք էր անվերջ, ծեծ ու հայհոյանք գործարանային խուլ ժխորի մէջ»: Մերթ արտասուում, մաշւում է մեր պօէտը՝ փողոց թափթփւած անխնամ, թշառ մանուկների համար («Փողոցի տղան»), որոնց ծնողները տառապում են գործարաններում կամ բանտերում, և կուղկնար նրանց մօր պէս փայփայել: Մերթ ողբում է նա թեւ մեքենայից ջարդւած աղջկայ, ասել է՝ բանւորուհու, թշառ բաղբը («Անիւի տակ»), որ «սե հացի համար անհամար վշտեր ու տառապանք» է կրել: Մի այլ տեղ («Ջրանեղծ կուսին») բանաստեղծը կսկծում է տանջանքի ու ծանր կարիքի ազդեցութեան տակ ջուրը մատնւած բանւորուհու կորուստը: Մերթ նա յուզւած շեշտերով պատկերացնում է աշխատանք որոնելու դիտաւորութեամբ գիւղից մայրա-

քաղաք եկած չքաւոր աղջկայ տառապալից վիճակը («Շատերից մէկը»), որ տնաշխատ գրութեան մէջ սովամահ է լինում՝ մահը գերադասելով մարմնի վաճառքից, անառակ կեանքից: Մերթ զգացւած նկարագրում է («Յաղթւածները») այն մեծաքանակ աշխատազուրկերի լքւած վիճակը, որոնք վնասուած ու յաղթւած աշխատանքի մրցութեան ասպարիզում, յուսահատ ալլես աշխատանքի աղբիւր գտնելու հեռանկարից և սովից ստիպւած՝ «իջել են սրկանների թագստեան տեղերը, մոռանալով ամօթ, նախատինք, վանելով անը մեռած սրտերից»: Այսինքն աշխատազուրկերը, զրկւելով նախկին «ազնիւ» աշխատանքի աղբիւրից, մատնւում են «անազնիւ» վաստակի գիրկը: Եւ այլն և այլն:

Դա մի հարուստ կալէյդօսկոպ է, ուր անդրադառնում են կապիտալիստական շահագործութեան լքւած, ճգմած ու սմքած զոհերի խայտառճամուկ պատկերները. դա սօցիալական դժնդակ չարիքի գանազան վայրկեանների բանաստեղծական յուզումնալից նկարագիրն է: Մեր բանաստեղծուհին, ինչպէս տեսնում էք, դուրս է գալիս իր նեղ անհատական մտորումների շրջանակից և թեւակոխում հասարակական լայն հորիզոնը. նա տիրում է սօցիալական կենդանի բնագոյններին, նրա գրգիռը զարկում է ուժգնօրէն, գլուխում նեարդերը, յուզում, փոթորկւում է, մաշւում ու լալիս՝ կապիտալիստական-վարձու-բանւորական աշխատանքի ներկայացուցիչների տարաբաղդ վիճակը երգելիս:

Իհարկէ գժւար է պահանջել 22—25 տարեկան (երբ նա լոյս է ընծայել իր երկու պրակները) երի-

տասարդ բանաստեղծուհուց «փիլիսոփայական» սանահասրութիւն՝ ըստ «սչ լալ, ոչ խնդալ, ալլ հատկաւալ» սպինօղեան նշանաբանի: Տաքարիւն բամանուհին հեռու է պրօլետարական գաղափարախօս—բանաստեղծի օքսիկտիւ, խորամրոնող վերաբերմունքից գէպի իր շրջապատի բացասական երեոյթների պատմական անխուսափելիութիւնը: Նա, ընդհակառակը, որպէս մանր—բութուական զգայուն դեմօկրատ, իր քարոյական պարսաւանքն է ուղղում գէպի «մարդկային քարացած խիղճը», նշաւակում շրջապատի լեռ անտարբերութիւնը գէպի տնանկը, խիղճը, հաշմանդամը, աշխատազուրկը, անխնամ որը, մուրացիկ աղքատը և այլն: Սակայն մենք մտադիր չենք խստապահանջ լինիլ Ադա-Նեգրիից, առաւել, երբ մեր առաջ դրւած քննութեան առարկան ոչ թէ սօցիալ-փիլիսոփայական մի գործ է, ալլ աշխատանքի երգչի յուզումների, թրթռուն զգացմունքների, նուրբ յոյգերի հաւարական արտայայտութիւնը:

II.

Երկրորդ պրակի մէջ մեր բանաստեղծուհին հանգէս է գալիս, համեմատաբար, աւելի վարժ տեխնիկայի և հասանալի մտքերով, որպէս հմուտ պօէտ: Նա դարձեալ սկզբում մի ընդհանուր «Salvet»-ի ջիւմ գուրգուրանքով ողջունում է աշխատանքի գանազան ճիւղերի աշխատաւորներին՝ «ժիր դութանի չարքաշ հերոսներին», «լեռնահանքերում գիշեր ցերեկ հաղիւ շնչող անխոնջ հսկաներին», «արհեստանոցի խուլ ժրխորի մէջ անընդհատ գործող երկաթէ կրծքերին», «ազնիւ վաստակով տեգորւած» այն բիւրաւորներին՝

որոնք «մաշուում են հանգիստ չիմացող անյայտութեան մէջ» և այլն. —

«Ո՛վ աշխատանքի անպարտ հերոսներ,
ես ձեզ եմ երգում, ձեր սերտ միութեամբ
Ընդ միշտ եղէք մեծ, կուեցէք քաջ-բաշ—
կեանքն է շատ կարճ»:

Ահա այդ բոլորին մեր պօէտը «սրտով դողողներն օրհնանք և ողջոյն» է առաքում:

Մի տեղ, նոյն «Salvet»-ում, Ադա-Նեգրին ողջունում է նաև «հոյակապ խելքի, մտքի ասպետներին, թշառ ամբոխի ուղեցոյց աստղերին, որ չարիքի դէմ միշտ կոչ են անում անվերջ մարտ մղելու»: Դրանով, ակներև է, երիտասարդ բանաստեղծուհին ողջունում է աշխատանքի զարգացող սկզբունքը, տեխնիքական միջոցների կատարելագործութեան յարաճուն ընթացքը, որով հնարաւոր է դառնում աշխատանքի արդիւնաւէտութեան բարձր աստիճանը: Նա նոյն խոսքով, հաւանակ իր սովորական փափկազգայունութեան, չի ցաւում լեռնահանքի զոհերի կորուստը, որովհետև այդ զոհերի գնով՝

«...Ճեղքուած է ու բացւած կուրծքը յամառ լերկ սարի

եւ շոգեկաթսան վազում է միջով յաղթական անցքով

եւ արշալոյսին դիմաւորում է ողջագործանքով»:

Աշխատանքի երգիչը, ասում ենք, յայտարարում է դրանով աշխատանքի առաջադիմող, նախադասական սկզբունքը. և այդ հանգամանքը ընդհանուր լոյս է սփռում նրա աշխարհայեացքի վրայ:

Ադա-Նեգրին երկրորդ պրակում ընտիր բանաստեղծութիւններ շատ ունի, որոնց մէջ առանձնապէս աչքի են ընկնում «Հրդեհ հանքերում», «Բահի երգը»,

«Հողը», «Անմահը» և այլն: «Հրդեհ հանքերում» բանաստեղծուհու ամենամեծ և ամենայայտօր մտաւոր արտաբերութիւնն է՝ դոնէ մեր նիւթի տեսակէտից: Նա նորրը գծերով մանրամասն նկարագրում է աշխատանքը հանքերում, հրդեհ բռնկելը և նրա «շառաչող բոց-ալիքների» այրման ընթացքը, հարիւրաւոր մարդկաչին զոհերի կորուստը «խեղդող ծխի հեղեղում» և «կոյտերով սայլերին բարձած» դիակների թաղման գործողութիւնը, ապա պատկերը աշխատաւորների որբ մնացած դասակների թշառ կացութեան, որոնք ևս ժամանակով, իրենց հերթին պիտի հետեւեն նոյն ճակատագրական կոչման և նրանք՝

«Գուցէ հնացած խարխուլ շիրտերում

Յանկարծ հանդիպին իրենց հայրերին—

Ու իրար տալով հողի կոյտերը,

Ճանաչեն նրանց սև կմախքները»:

Այդ բոլոր շատ լաւ: Բայց ի՞նչ արժէք ունի բանաստեղծի հետեւալ բարոյական ցատկոտ խրատը՝ նոյն «Հրդեհ հանքերում».

«Ելիր, մեծատուն, ու թոյլ ծուլութիւն,

Մեղկ հաճոյքներիդ ու մեռելութիւն,

Ելիր շտապով ու մերկ ճակատով

Խոնարհուիր այս թաց խոնաւ հողերին,

Ընկիր ծնկաչոք ան ու երկիւղով,

Լիզիր քարերը մոռցուած թումբերին.

Այստեղ հրդեհում նահատակ դարձած՝

Հացի համար քո եղբայրն է ընկած»:

Սա մանր-բութական լաւատես դիմօկրատի մի բարոյական սրտառուչ կոչ է, որ, անկասկած, չունի ոչ մի հիմք զուտ պրօլետարական դիմօկրատի

աչքում: «Մեծատունները», ասել է կապիտալիստները, իրենց շահերի համար, հեշտ գնով, միշտ թաղել են և կթաղեն տակաւին բանւորական սերունդների սառը հոդի մէջ՝ քանի իրենք կմնան տէրն ու տնօրէնը բանւորի ճակատագրի, առանց, բնական է, որ և է բարոյական պարտք զգայու «նահատակների» յիշատակի առաջ: Եւ ինքը՝ գիտակից աշխատաւորը, չի էլ ահլընկալում ոչ մի գէպքում խնկարկելու «մեծատուններին»: Կրկնում ենք, խտապահանջ լինել Ադա-Նեգրիից՝ նման գաղափարային սպրդումների համար, դժուար է: Այն, ինչ տեսական խորհրդածութեան մէջ թոյլ, դժգոյն, անիմաստ է, — սօստի զրչի տակ հըղկում են և այնքան զգայի չեն թւում այդ պակասութիւնները, իսկ երբեմն անգամ որոշ անմեղ թովչութիւն են ստանում:

Հարց է ծագում՝ թրն է, արդեօք, այն սպաւազան, ազատագրութեան այն հեռանկարը, որ յանձնարարում է մեր հեղինակը իր այնքան սիրած ու երգած աշխատանքի հաւաքական ներկայացուցչութեան — աշխատաւորութեան: Առհասարակ թրն է Ադա-Նեգրիի profession de foi-ն: Ի՞նչ իդէալների պիտի ձգտէ աշխատաւորութիւնը և ի՞նչ եղանակով:

Այդ հարցը էապէս բաց է մնում Ադա-Նեգրիի մօտ: Նա որոշակի և ուղղակի գրեթէ ոչինչ չի ասում. իսկ մութ ու անորոշ արտայայտութիւնները՝ բարոյական շաղախով, քիչ բան են ասում մեզ այդ մասին: Ճիշտն ասած, այդ հարցը նրան առանձնապէս, սկզբունքային տեսակէտից, գրեթէ չի դադեցնում. նա միայն ոգևորած արտայայտիչն է աշխատանքային կեանքի կենդանի իրականութեան առանձին բացա-

սական բոլէների. նա չի հանում իր դատ-դատ նկարագրական դիտողութիւններից մի ընդհանուր համագրութիւն և տեսլագիտական խորութիւն ու հիմնաւորումն տալիս նրան (իհարկէ այնքան, որքան հնարաւոր է այդ բանաստեղծական արւեստի շրջանակում): Կամ, եթէ այդ դժուար է սպասել երիտասարդ բանաստեղծուհուց, գոնէ չի յարում նա գոյութիւն ունեցող գաղափարային հոսանքներից որ և է մէկի հասկացողութեան: Այդպէս, միւլերոյն աշխարհայեացքի ներկայացուցիչ, որոշ զրօշակի հետևող անկարելի է համարել Ադա-Նեգրիին, որպէս բանաստեղծ-մտածող: Նա սոսկ երգիչ է ընդհանուր աշխատանքի և համայն աշխատաւորութեան վշտի ու տառապանքի. նա իդէալիստ, առաջագէմ զգայուն դեմօկրատ է բառիս յըստակ նշանակութեամբ:

Տեղ-տեղ Ադա-Նեգրին հնչեցնում է իր քնարը յոռետեսօրէն, տեղ-տեղ՝ լաւատեսօրէն. բայց ոչ յոռետեսութիւնը և ոչ լաւատեսութիւնը չեն կաղմում աշխատանքի երգչի հոգեբանական տարերքը: Ըստ իր ընտրած ու երգած նիւթի կամ մօմենտի բնոյթի՝ նա արտայայտում է համապատասխան տրամադրութեամբ:

«Ապրել եմ ուզում, յաւիտեան ջահել լինել եմ ուզում,

Ամբողջ աշխարհի բոլոր ծայրերից թռչել եմ ուզում,

Ուզում եմ սիրել, խնդալ, ծիծաղել և հրապոյրը ճաշակել կեանքի

Իսկ քեզ, ժ, սե՛ մահ, ես քեզ ատում եմ,

Ու գոյութիւնդ անհ հերքում եմ»:

Երգում է Ադա-Նեգրին «Ամահը» վերնագրով

վերջաբան ոտանաւորի մէջ: Մական այդ խրոխտ ու համարձակ լաւատեսութեան հանդէպ մենք կարողում ենք տրամագծորէն հակառակ տողերը, ուր բանաստեղծուհին ոչ թէ կենսալիր ձգտումներով ապրել և «կեանքի հրապոյրը ճաշակել» է կամենում, այլ կոչում է «Փոթորիկներ»-ի մէջ՝

«Օ՛, ոգիներ, չափ ոգիներ,

Աղաչում եմ ու խնդրում,

Ինձ էլ տարէք դէպի եթեր

Ձեր սրարշաւ թևերում:

Տարէք՝ սահեմ, ինչպէս գետը,

Ծաղկից պոկուած թերթերը.

Տարէք մինչ սր անհետանամ

Ու ինձ կուլ տայ եթերը»...

Իսկ «Մտորմունք»-ի մէջ նա մի այլ անձկութիւն է յայտարարում՝

«Մինչդեռ այս մեղկ, ստոր վայրում սուրբ երկընթին մենք կարօտ,

Բարձր սիրոյ, վեհ զգացմանց կիմանք միշտ անծանօթ.

Ո՛չ. դէպ ձիւնեայ գազաթները եկ միասին սըլանանք,

Կեանքի և մեր սիրոյ ոյժը այնտեղ միայն կիմանանք»:

Իր կեանքի գաղափարակից ընկերոջ հետ միասին աշխարհի ցաւն ու կսկիծը տանելու և ամբոխին զոհեւելու պատրաստակամութիւն ունեցող պօէտը («Մոր սէր»-ի մէջ), այժմ անձկութիւն է զգում «մեղկ ու ստոր վայրում», ուզում է «սլանալ» դէպի վեր՝ «ձիւնեայ գազաթները» կամ «կուլ գնալ եթերում», Թոգետեսական-լաւատեսական նման հակադրութիւն-

ներ յաճախ են պատահում Աղա-Նեգրիի պրակներում (տես իմիջի այլոց՝ «Հրդեհ հանքերում», «Մինչեւ մահ և յետոյ», «Ուրուականներ» և այլն), որոնց բընոյթագծով մանրամասն զբաղելը գրւածքիս մէջ, մեր գործը չէ:

Մենք հարցրինք, ինչ եղանակով պիտի առաջ ձգտեն երգչի սիրած ու փայփայած աշխատանքի ներկայացուցիչները դէպի իրենց իդէալ. իդէալ, որի մասին պարզ ու որոշակի չէ արտայայտուած երբեք մեր պօէտը: Այդ հարցին մենք մի քանի պատասխաններ ենք ստանում.

«Սպիտակ դրօշ»*) նշան անարիւն Վեհ յաղթանակի»**)

Սիրոյ թևն ելած՝ չարիքն ու ոխը պիտի խորտակի»:
(«Բահի երգը»):

Մի այլ տեղ կարդում ենք՝

«Եւ նորից ճնշւած, նետւելով գիրկը յուսահատութեան՝

Մտածում եմ ես՝ կտեսնեմ արդեօք նորից մի անգամ

Ազատ արևը ինձ փայփայելիս, և թւում է թէ Վերջապէս մի օր փրկարար ոգին ընկալանու-
թեան»***)

Պիտի վերջ դնի մարդկանց կրկնող հառաչանքներին—

Ընդ միշտ յաւիտեան»:

(«Բաջալերուած ընուծիւն»):

Ուշադրութեան արժանի են աշխատանքի երգչի

*) Պաղատութեան խորհրդանշան:

**) Ընդգծումը մերն է:

***) Ընդգծումը մերն է:

վերոյիշեալ ընդգծած խօսքերը: Որպէս չափաւոր օրինական դեմօկրատ՝ կուզենար նա «վեհ յազմանակ», բայց «անարիւն» ճանապարհով, «սպիտակ գրօշի» ուղեկցութեամբ, խաղաղ ջանքերի գնով, կամ, պարզապէս անտական բառով՝ արտայայտւած՝ բարենորոգութեան միջոցով, առանց յուզիչ, փոթորկալից, արհեստներէ գործողութիւնների: Մեր պօետը կուզենար, որ մի գեղեցիկ օր Քրանականութեան վերկարար ոգին՝ վերջ տար մարդկանց բիւրաւոր հառաջանքներին «ընդ միջոցաւիտեան», ասել է, ուրիշ խօսքով, սօցիալական կուռ հանդոյցը լուծելը մարդկային բանականութեան թելադրանքով. հետեապէս՝ դարձեալ խաղաղ, անարիւն եղանակով, այսպէս ասած՝ «էվօլյուցիօնարար», առանց «թռիչքների»: Այդպէս է, սովորաբար, իրերի ընթացքը՝ ըստ չափաւոր բիւրգիւնների օրինական մտածողութեան:

Պարզ է, որ այս և նման «բանաստեղծական խոհերը» բնորոշիչ կնիք են դրօշմում Ադա-Նեգրիի ընդհանուր աշխարհահայեացքի վրայ: Նա՝ իր սօցիալ-քաղաքական հայեացքներով, — որքան վերջինս նկատել կարելի է նրա անուղղակի արտայայտութիւններից, — մեղմ, քնքշալար իդէալիստ է, դիւրադգաց դեմօկրատ, և գրկաբաց հիւրընկալում է աշխատանքի անխտիր բոլոր գոհեք վեհան ու աստաղանքը: Եւ ինչու ու հասարակօրէն և այդ ամենին հիստամ արտաձայնի կրօնը: Փափաղում է համայն աշխատաւորութեան վրեւած, բարեբանաբի վրեւով: Բայց ինչպէս, ինչ բնասողով ու բնաւորութեամբ, դա պարզ չէ մեր պօետի համար: Ադա-Նեգրին տողորում չէ համայն աշխատաւորութեան յայտնի խաւի — բանաւորութեան — հասարակական իդէալով: այդ է պատճառը, որ նրան անմատչելի է պրօ-

լետաբիատի պատմական գոյութեան իրական պայմանների ծոցից բղխած ազատագրութեան միջոցը — մարտական ուղին:

Սենք ուրանում, կան աշխատանքի երգչի մօտ խրոխտ, համարձակ կտորներ:

ՅԵՆ ՈՎ ԵՄԱՐԱՍՈՒՄ Է ԿԵՆՆԵՐԻ ԱՅԱՅԴԱՐԻՑ, ԹՈՂ

անհետանայ

Անյայտութեան մէջ, թող վախկոտներին տանի

ու խեղդի

Պղտոր ալիքը հսկայ Կետայի, նա, ով վախում է Ու յետ է կանչում, ով որ շրջում է որպէս ուր-ւական,

Ով որ կանգնած երկնակամարի ու երկրի միջև Որպէս տատանւող, երերուն ստուեր, թող ան-հետանայ

Կորչի յաւիտեան:

Բայց մենք քաջերս, որ հաւատ ունինք մեր կրծքում պահած,

Մենք առաջ կերթանք, բաջամարտ, ազատ, ու-ժեղ շարքերով... («Անմահը»):

Այստեղ գրեթէ մարտահրաւէրի շնչեր են հըն-ւում: Բայց միայն գրեթէ: այնքան, որքան յատուկ է մանր — բոլորովին անաշխատ գեղեցկատիւ: Դա մտքերի անվեհեր խիզախութիւնը չէ՝ համոզւած ու գիտակից պրօլետարական յեղափոխական դեմօկրատի, որ դասակարգային կուրի է կոչում ընդդէմ տիրող հա-սարակաւորագի:

Թողնենք առայժմ Ադա-Նեգրիին և անցնենք միւս բանաստեղծներին:

III.

Եթէ Ադա-Նեգրին երգում է աշխատանքի գաղափարը՝ իր նկարագրական մեղմ ու քնքշալար, երբեմն զգայական ոճով, ապա Յ. Յակոբեանը երգում է աշխատաւորի գաղափարը՝ իր գլխաւորապէս ազիտացիական ոճով, իսկ Շ. Կուրղինեանը երգում է աշխատաւորի-աղատագրի գաղափարը՝ զերազանցապէս իր մարտական-խիզախ ոճով: Վերջին երկուսը այլ դէմքեր են, քան առաջինը: Առաջինը զբաղեցնում է ինքը աշխատանքը, որպէս արհեստական—մեքենայական գործողութիւն, և այդ գործողութեան զանազանակերպ ձեւերը, աշխատանքային ծանր պայմանները, սրանց ստեղծած բացասական կողմերը՝ իրենց դժնդակ, ողբերգական հետեանքներով: Վերջին երկուսի բանաստեղծական օրիկիտը, ընդհակառակը, կազմում է ոչ թէ աշխատանքը, այլ առաւելապէս աշխատանքի ներկայացուցիչը՝ աշխատաւորը, աշխատաւորը, որպէս սոցիալական ձգտումներով ու պարտականութիւններով ծանրաբեռնած դիտակից բաղաքացի, որպէս ազատագրական գաղափարին, դատակարգային պայքարին նըւիրած մարտիկ:

Նշանակում է, Յակոբեան և Կուրղինեան՝ իրենց ընտրած օրիկիտներով և իդէական արտացոլումներով, մի քայլ առաջ են Ադա-Նեգրիից: Սակայն այդ քայլը ոչ թէ օրդանական շարունակութիւնն է առաջին քայլի—աշխատանքի գաղափարի—, այլ անկախ այդ առաջին քայլից: Նրանց մօտ բացակայում է առաջին քայլը այնքան, որքան Ադա-Նեգրիի մօտ բացակայում է աշխատաւորի գաղափարը—երկրորդ քայլը:


Եթէ Ադա-Նեգրիին մենք անւանեցինք աշխա-

տանքի երգիչ, ապա հետեողականօրէն Յակոբեանին և Կուրղինեանին կարելի է անւանել աշխատաւորի, աւելի ճիշտ՝ պրօլետարիատի երգիչներ: Եւ պատահական չէ այդ զուգահեռութիւնը: Դրանց երկուսի բանաստեղծական հիւսւածքը՝ ստեղծագործւած վերջին 2—3 տարւայ ընթացքում, կրում է իր վրայ սոցիալ-քաղաքական հարազատ կնիքը այն պատմական երկունքային վայրկեանների, որ մեր երկրի ազգաբնակչութիւնը ապրել ու վերապրել է: Եւ հասարակական այն խաւը, որին պատմական անհրաժեշտութեամբ ամենամեծ և ամենամանր բաժինն է ընկել մեր երկրի ազատագրական շարժման, իր քաղաքական էութեամբ նիւթ է մատակարարել մեր բանաստեղծ երգիչներին մուսային:

Ինչպէս են կատարել իրական վայրկեանների այդ բանաստեղծական արտացոլումները, տեսնենք առանձին-առանձին:

Յ. Յակոբեանը նոր դրող չէ մեր բանաստեղծական գրականութեան մէջ: Իր առաջին ժողովածւի մէջ՝ հրատարակւած 1899 թ., նա ունի ոտանաւորներ 90 թւականից: Այնուհետեւ 1903—04 թ. նա թարգմանել և լոյս է ընծայել Ադա-Նեգրիի բանաստեղծութիւնների երկու պրակները: Իսկ 1906 թ. նա հրատարակել է իր ոտանաւորների երկրորդ ժողովածուն՝ «Նշխատանքի երգեր» վերնագրով: Մեր բնաբանի տեսակէտից ուշադրութեան արժանի Յակոբեանի առաջին ժողովածուն չենք կարող, որովհետեւ այնտեղ աշխատանքի և աշխատաւորի գաղափարի հետքն անգամ չկայ. այնտեղ տիրապետող ազգութիւնը հայրենիքի գաղափարն է (տես օրինակ՝ «Եւ երգեցի», «Պատկերներ», «Դաղթականները» և այլ բանաստեղծութիւնները),

1002
ԿԻՄ



որի տեսակէտից Յակոբեանը արդէն այլ բանաստեղծների շարքին է պատկանում: Առհասարակ հասարակական-գաղափարային դաւանանքի տեսակէտից գոյութիւն չունի որ և է առնչութիւն Յակոբեանի առաջին և երկրորդ ժողովածուների մէջ. առաջին մէջ նա հանդէս է գալիս իբրեւ նացիօնալիստ պօէտ, երկրորդի մէջ՝ որպէս պրօլետարիատի երգիչ:

Առաջին խօսքը, որ մենք պիտի ասենք Յակոբեանի երկրորդ ժողովածուի կամ «Աշխատանքի երգեր»-ի մասին, դա այն ցաւն է, որ Ադա-Նեգրիի թարգմանիչը քիչ, շատ քիչ է ազդուել իր վարպետից: Եթէ մի գրական դէմք,—մտնաւորականութիւնների սահմանում՝ հոսանքների և ուղղութիւնների այդ կինդանի բովում,—ինքնին չէ ներկայացնում իր սահմանում մի ինքնուրոյն մեծութիւն, գրականական մի առանցք, ցանկալի և յանձնարարելի է նրա խելացիօրէն ազդուել ինքնուրոյն մեծութիւններից: Որքան էլ Ադա-Նեգրին իր ստեղծագործական տաղանդով տեղ չունենայ եւրօպական առաջնակարգ քերթողների շարքում, այնուամենայնիւ փաստ է, որ նա իր առաջնորդող տրամադրութեամբ մի ժամանակակից ու թարմ ինքնուրոյնութիւն է ներկայացնում եւրօպական բանաստեղծական գրականութեան մէջ: Եւ եթէ հայ թարգմանիչը լաւ ուսումնասիրած և հետեւողականօրէն ազդած լինէր Ադա-Նեգրիի ստեղծագործութեան գրական կողմերից,—որոնց հետ մենք ծանօթացանք,—այն ժամանակ յանձինս «Աշխատանքի երգեր»-ի մենք իսկապէս կունենայինք աշխատանքի երգեր:

Եւ իրաւ, եթէ դուրս հանենք Յակոբեանի երկրորդ ժողովածուից Ն. Ն.-ի «Բանտրների երգը» և

Ադա-Նեգրիի՝ «Հրդեհ հանքերում», «Բահի երգը», «Հողը»*) և «Աշխատե՞լ ես դու» իսկապէս աշխատանքի երգերը, այն ժամանակ «Աշխատանքի երգեր» գրքոյից ոչ մի դէպքում իրաւունք չի ունենայ այդ անունը կրելու, որովհետեւ Յակոբեանի սեփական բանաստեղծութիւնները աւելի շուտ աշխատաւորի, քան աշխատանքի երգեր են: Ի՞նչ ասել կուզի, որ մեր դիտողութիւնների մէջ գործ կունենանք բացառապէս Յակոբեանի սեփական գրածների հետ: Ադա-Նեգրիից և Ն. Ն.-ից թարգմանաւորները մեզ չեն հետաքրքրում ներկայ դէպքում՝ Յակոբեանի ժողովածուի մէջ:

Գրքոյի առաջին իսկ մասում հեղինակը որոշում է իր՝ այսպէս ասած, բանաստեղծական թափառումների վայրը, իր օրոնման տեղը, որից, մօտաւորապէս, երևում է մեր պօէտի ընդհանուր տենչանքների ուղղութիւնը: «Ամբոխն իմ աշխարհը» ըստինքեան բընորոշիչ ոտանաւորի մէջ կարդում ենք՝

«Որքան էլ ուզեմ ձգտել դէպի ձեզ,

Վեհապանձ սարեր,

Ու փարեւ մաքուր ձեր ձիւնեայ կրծքին,

Ելի չեմ կարող, կուսական լեռներ,

Երկիրը թողնել,

Որ խարխափում է կեղտ ու մուրի մէջ,

Տառապում անվերջ.

Եւ ես կարիքի աշխարհն եմ փնտրում—

Ճնշած ու լքած,

*) Ի դէպ նկատենք, որ «Հողը» բանաստեղծութեան տակ չէ յիշատակել Ադա-Նեգրիի անունը. կարծում ենք, որ դա թիւրիմացութեան արդիւնք է, բայց է թողնած սխալմամբ:

Ուր վիշտն ու զրկանքը իրար հետ գրկւած՝

Մի ելք են փնտրում»:

Նոյն միտքը էսպէս կրկնւում է՝ տարբեր ելեւէջներով, նոյն ոտանաւորի մէջ մի քանի անգամ: Այդ տողերից պարզ երևում է, թէ ինչ է որոնում բանաստեղծը իր հանգիստն ու յենակէտը: Այդ միտքը մեզ յիշեցնում է համապատասխան կէտերը Աղա-Նեգրիի մօտ:

Յակոբեանը հեռւում է Աղա-Նեգրիի դրական, լաւատեսական կողմերին և ընդհանրապէս տրամադրութիւն չունի բովանդակական յոյզերով վեր-վեր սլանալ դէպի ամպամած եթերը, վերամբարձ լեռների գագաթները: Աղա-Նեգրիի ժամանակաւոր-պատահական յոռետեսութիւնից չկան տարբեր Յակոբեանի բանաստեղծական խառնուրդի մէջ: Սակայն ինչհէ, չըգիտենք, մեր պօէտը սրտի պապակումով պոհ մի երանի է տալիս բովանդակական վերափոխումներին՝

«Օ՛, ինչպէ՛ս քաղցր է երկինք վերանալ,

Վիշտ, հոգս մոռանալ,

Լոյսի փայլի մէջ լողալ, սաւառնել,

Աստղերին գրկել»...

Երգում է նա, «բայց անողոր իրականութեան և ուրուականը» հրամայում է՝

«-Ի՛նչ իր երազոտ երկնային գահից

Կեանքին մօտնալու,

Նրան պարտք ունիս, հարկ ունիս տալու»:

Վերին ու ստորին տողերը անախորժ աններդաշնակութիւն են մտցնում մեր հեղինակի սկզբնական վճռական յայտարարութեան մէջ: Մի կողմից անվճռականութեան շեշտեր են պարունակում առաջին տո-

ղերը, որ բաւական տարօրինակ է լսել մի պրօլետարական երգչից. միւս կողմից բարոյափրկապական հասկացողութեան սաղմեր են նկատուում վերջին տողերի մէջ: Իրական կեանքին մօտենալը և իրական գործունէութեամբ մասնակցելը նրա ընթացքին՝ պարտականութիւնից դրւած, «պարտք ու հարկ» է համարւում մեր հեղինակի կողմից: Դա արդէն մի թիւր հասկացողութիւն է, էլ աւելի տարօրինակ պրօլետարիատի բանաստեղծ-իդէօլոգի կողմից: Յակոբեանի զաղափարային նման թիրիմացութիւնների մասին կիսօտենք ստորեւ, այլ կապակցութեան մէջ:

Անցնենք ժողովածուի միւս մասերին:

Իրերեցէք 64 երեսանոց ողջ գրքոյկը և չէք գտնի ոտանաւորներ, որոնք շօշափէին աշխատանքի խնդիրը, պտտէին աշխատանքի գաղափարի շուրջը, չկան բանաստեղծութիւններ, ուր հեղինակը վերցնէր բանւոր անհատին կամ բանւորական խմբակին՝ արհեստային կամ գործարանային որ և է ճիւղի մէջ, և երգէր աշխատանքային բուն վայրկեանները, նկարագրէր ֆիզիքական ոյժի վատնման այն պրօցեսը, որը ոյժը կենդանի անհատից հաղորդւում է ընտելեան անշունչ առարկաներին, արգիւնաբերական գործիքներին: Մինչդեռ որքան զեղեցիկ օրինակներ կան այդ տեսակէտից Աղա-Նեգրիի պրակների մէջ:

Յակոբեանը ունի մի ոտանաւոր «Կըտէնի» վերնագրով, ուր նկարագրում է նա Սանդուխտ նանի հաց թխելու և նրա ամուսնու շուկայից ալիւր բերելու պրօցեսներն:

Տընքտընքալով ծերուկ ապին

Քնատեղից վեր է կենում,

Ալիւր տուրակ կըռան տակին

Դէպի շուկան է նա գնում.

Նանը շաապ կապն է բացում,

Ալիւրն ամուսն մեծ տաշտի մէջ,

Տըխտըմորում, խըմոր հունցում,

Պիւլեր անում, շարում անվերջ»:

Եւ այլն:

Աշխատանք է այս.—անկասկած: Սակայն դա աշխատանք է իր սոսկ տնային—նահապետական իմաստով, աղագրական բնոյթով: Դա աշխատանք չէ երբեք իր սօցիալական բնոյթով, իր ժամանակակից հասարակական-անհրաժեշտ բովանդակութեամբ, որի մասին խօսում ենք այստեղ: Եւ այդպիսի բանաստեղծութիւնը աւելի շուտ սագական է հրատարակել «Աղագրական Հանդէս»-ի մէջ, քան պրօլետարիատի երգչի «Աշխատանքի երգեր»-ի մէջ: Այս բացասական դիտողութիւնը ինքնին սուեր չէ ձգում վերոյիշեալ ոտանաւորի վրայ, որպէս այդպիսին. նա իր տեսակում գեղեցիկ է և Յակոբեանի յաջող բանաստեղծութիւններից մէկը: Խօսքս վերաբերում է միայն նրա արտայայտած աշխատանքի գաղափարային բնոյթին:

Մի հատիկ ոտանաւոր միայն գտանք Յակոբեանի մօտ, ուր համառօտօրէն նկարագրւում է կաթնավար բանւորի աշխատանքի պրօցեսը: Մի նմուշ նրանից՝

«Վիթխարի գազան հնոցի առաջ

Բոց ու կրակի տապից թառամած՝

Մեր կաթնավարը հսկում է նորան

Ուշքն ու միտքը ջրչափին յառած:

Ամառ ու ձմեռ նա գովի կարօտ—

Քրթինքն է ծորում դալուկ ձակատից,

Որ ակոսելով երեսը մրոտ,

Սև հացի գին է պահանջում բազդից»:

(«Կլսութեամբ»):

Աշխատանքային կեանքի նման նմուշներ չէք գտնի այլևս «Աշխատանքի երգեր» կոչուող ժողովածուի մէջ: Մեր հեղինակը հանդէս է գալիս արդէն աշխատաւոր-պրօլետարի երգչի դերում իր ագիտացիական, անգամ ծրագրային քարոզներով: «Պրօլետարներ ողջ աշխարհի, ոտքի ելէք միացէք»—կոչում է մեր պօէտը շեշտակի:

Եւ ճիշտ այն ժամանակ՝ 1905—06 թ., երբ հրապարակական ուժեղ բռնկումներով արթնացած աշխատաւորութիւնը աղմկում էր օրինական քաղաքացիութեան աւանդական հանգիստն ու անտարբերականութիւնը, երբ նրա առաւել գիտակից շարքերը հաւաքական պահանջների բուռն ցայտումներով հնչեցնում էին իրենց գաղափարային նշանաբանները,—մեր բանաստեղծը ընդառաջելով շուրջը վխտող երեւոյթներին, արձագանքում էր՝

«Գարնան անդրանիկ մեր այս աօն օրին

Պահ մի մոռանանք վիշտը բանւորին.

Մեր ցաւ ու հոգսեր սար ու ձորին տանք,

Ազնտ երգելով գովենք աշխատանք:

Եւ թող խլանայ ձայնը բռնութեան—

Աղմուկ չլսւի գործարաններից,

Այսօր մեր տօնն է վեհ գիտակցութեան

Թող պայթի աղան յամառ գայրոյթից»:

(«Մայիսի մէկը»):

Եւ այնուհետև՝

«Օդ ենք ուզում, կարմիր արև,

Ծաղիկ, աղբիւր անուշահամ,

Ազատ, վստահ եկէք յայտնենք՝

Պահանջում ենք միայն ութ ժամ»:

(«Ութ ժամ»):

Ակնհերե է, որ մեր պօէտը գիտակից բանւորութեան կուսակցական-ծրագրային կէտերը բանաստեղծական ագիտացիայի նիւթ է դարձրել: Նա երգում է մարանչող բանակի դասակարգային իդէիքը, արտայայտութիւն տալիս նրա քաղաքական ձգտումներին՝ բանաստեղծական ձևերով: Համեմատաբար թոյլ շեշտերով և մութ նկրտումներով է երգում նա նաւթահանքային բանւորի («Նրկու ախոյեան») և դարբին աշխատաւորի («Դարբնի երգ») վիճակը:

Սակայն իբրև պրօլետարիատի երգիչ, Յակոբեանը չի մոռանում իր հերթին բանաստեղծական խայթող նիզակ ուղղելու նաև բանւորութեան ծայրագոյն հակառակորդի հասցէին:

«Այդպէս օրերը սահում են արագ
Եւ դուք դեռ թաղուած ճահիճի տիղմում,
Սողում էք, որպէս ճիճունի անարգ
Մորի կրքերը չէք էլ մեղմում:

Սերունդ մեղսալի, սերունդ ճահճային,
Դուք ի՞նչ պատասխան պիտի տաք մի օր
Լաւ ապագային»:
(«Բուրժուաներին»):

Յիշում է երևի ընթերցողը, երբ մինք Ադա-Նեգրիից առաջ բերանք բարոյական ցասման արտայայտութեան նման նմուշներ, նկատեցինք, որ դա մանր-բուրժուական դիւրագգաց դեմօկրատի բարոյական պարսաւանք է, ոչ աւելին. բայց աւելացրինք միաժամանակ, որ դէպի Ադա-Նեգրին խստապահանջ լինել այդ հողի վրայ դժւար է, ինկատի ունենալով նրա հայեացքների չափաւոր, սոսկ դեմօկրատիկ ուղղութիւնը: Սակայն պրօլետարիատի երգիչ Յակոբեանի

վերաբերմամբ ներդամիտ լինել նոյն չափով, անկարելի է: Անհերիշի է, երբ պրօլետարիատի բանաստեղծ—գաղափարախօսը իրերի օբիեկտիւ ընթացքին նայում ու դատում է մանր-բուրժուական բարոյագիտութեան ակնոցներով: «Ճիճունի անարգ», «սերունդ մեղսալի, սերունդ ճահճային»—միանգամայն անիմաստ դարձածքներ են, եթէ աւելին չասենք: Եւ հաւատացած ենք, որ Յակոբեանը իր բանաստեղծ գրաւոր խորհրդածութիւնների մէջ կզգուշանայ այդպիսի սայթաքումներից, կխուսափէ նման բարոյական մակդիրներով որակելու մի գասակարգի, որի պատմա-տնտեսական էութիւնն ու հասարակական—քաղաքական դերը՝ պրօլետարիատի դասակարգային իդէօլօգիայի տեսակէտից, երբէք «մեղսալի» կամ «անարգ» չէ, այլ նոյնքան բնական ու հասկանալի է, որքան և պրօլետարիատինը:

Եթէ գեղեցիկ արեւստը—և դրա շարքում յատկապէս բանաստեղծութիւնը—սւղում է բարձր լինել միակերպ գեղեցիկահիւս բառագարդութեան մակարդակից և որոշ ուղղութեամբ, գաղափարներ իմաստալից դուգորդութեամբ աղղեցութիւն ունենալ ընթերցող հասարակութեան վրայ, նա պէտք է ճշգրիտ հայեացքների թարգման հանդիսանայ, ունենայ գաղափարալին որոշ պարունակութիւն ու խորութիւն՝ համապատասխան երևոյթների իրական ըմբռնման և անաչառ գնահատման: Յակոբեանը, իբրև աշխատաւոր-պրօլետարի երգիչ, պէտք է խուսափէ մանր-բուրժուական բարոյախօսութեան դիւրագգաց գզւանքներից և խօսէ աշխատաւորի սրտի ու մաքի հետ այնպիսի լեզուով, որ ոչ միայն չհակասէ իր տեսական աշխար-

հահայեացքին, այլև նրան համապատասխանելով հանդերձ, գայ լրացնելու նրա արտայայտութեան օժանդակ միջոցները: Մտքերն ու զգացմունքները՝ արտայայտած բանաստեղծօրէն, չպէտք է՝ իրենց սկզբունքային իմաստով, այլ բան ասեն բանասիրին, քան այն, ինչ ասում են նրան գիտական շարադրութիւնները. պէտք է այդ միջոցներից մէկը միւսին անհրաժեշտ կօրելատ ծառայէ, և նրանց տարբերութիւնը կայանայ, գլխաւորապէս, արտայայտութեան եղանակի մէջ:

IV.

Շ. Կուրդինեանը հայ բանաստեղծական գրականութեան նորագոյն ներկայացուցիչներից մէկն է համարում: Եւ այն համակրանքն ու ընդունելութիւնը, որ նա ընդամէնը երկու տարւայ ընթացքում գտաւ ընթերցողների շրջանում, այնքան հմայիչ է, որ հայկական մուսայի ներկայացուցիչներից շատերը կարող են նախանձել, չնայելով որ վերջիններս տասնեակ տարիներ շարունակ պտոյտ են գալիս Արարատեան դաշտի հայաբնակ որրանում կամ հայկական լրագրութեան կենտրոնում: *)

Երիտասարդ բանաստեղծուհին հրատարակել է իր երկի առաջին պրակը՝ «Արշալոյսի ղօղանջներ» վերնագրով, — ժողովածու նրա մինչ այժմ գատ-գատ

*) Մի հարեանցի տեխնիքական նկատողութիւն: Լեզու այն փաթեթի հարստութիւնը, արտայայտութիւնների նրբութիւնները և վարժ, արագ տեխնիկան, որոնք, մեր կարծիքով, այնքան սովորական են Կուրդինեանի համար, դժուար է նոյն չափով ու որակով գտնել անգամ մեր հոշակած և ամենայայտնի համարած բանաստեղծների մօտ:

հրատարակած բանաստեղծութիւնների: Վերնագիրը մաթեմատիքական ճշտութեամբ համապատասխանում է ժողովածուի գաղափարային պարունակութեան, որով առաջնորդում է պօէտը, այն տրամագրութեան, որ տիրապետում է նրա մուսային և կարմիր թելի նման անցնում նրա լուսագոյն հիւսածքների միջով:

Մեր գեղեցիկ գրականութեան՝ և յատկապէս նրա բանաստեղծական բաժնի մէջ, վերջին տարիներս հազիւ կարելի լինի մատնացուցել մի երկի վրայ, որ այնքան ուժեղ զգացմունքներով, խիզախ ու հատու արտայայտութիւններով, ներքին վերապրումներով և մարտական ոճով շարժել կարողանայ մեր երկրի արթնացող բաղադրացու սրտի թելերը, որքան «Արշալոյսի ղօղանջներ»-ը: Այդ «ղօղանջների» մէջ կան շատ ընտիր լարեր ու հնչիւններ, որոնք այնքան փառահեղօրէն աւետում են մեր երկրի հասարակական վիթխարի կազմածքի քաղաքական երկունքի արշալոյսը: Դրա մէջ է կայանում մեր բանաստեղծուհու գեղեցիկ հիւսածքի գերագոյն արժէքը. դրա մէջ է կայանում նրա ունեցած անսովոր ընդունելութիւնն ու համակրանքի գաղտնիքը այնքան կարճ ժամանակամիջոցում:

Ոմանք Կուրդինեանին համարում են հայկական Ադանգիրին: Այդ կարծիքը ունի իր իրաւացի հիմքը, բայց միայն մասամբ և արտաքին հայեացքից: Երկուսըն էլ կին սեռի ներկայացուցիչներ են. երկուսն էլ իրենց leitmotiv-ով պտոյտ են գալիս մարդկային հասարակութեան միևնոյն խաւի սօցիալական մթնոլորտում: Սակայն իդէօլօգիական յօրինւածքով — նրանք էապէս տարբեր են: Նրանք վերաբարտադրում են միև-

նոյն դասակարգի կենցաղի, զբաղմունքի, զգացմունքի և մտածմունքի տարբեր շրջանները: Մենք ճանաչեցինք արդէն Ադա-Նեգրերին, իբրև սոսկ աշխատանքի երգիչ: Մինչդեռ Կուրդիներն չեն զբաղեցնում պրօլետարի աշխատանքային վայրկեանները,— և այդ հանգամանքը կազմում է նրա զգալի թերութիւններից մէկը: Սակայն դրա փոխարէն մեր երիտասարդ բանաստեղծուհին մէկն է աշխատաւոր-պրօլետարի առաջնակարգ երգիչներից. մի արժանաւորութիւն, որից համարեա զուրկ է Ադա-Նեգրերն և որին նոյն չափով ու որակով չի տիրում Յակոբեանը, ինչպէս Կուրդիներն:

Շ. Կուրդիները կազմակերպւած, դիտակից ու մարտնչող պրօլետարիատի հետևողական երգիչն է. նրա քաղաքական տենչանքների, աղատագրական յուսալու ձգտումների արտայայտիչն ու արձագանքողը: Նա իր տպաւորութիւնները ստանում է բանւորութեան միջավայրից, բանաստեղծում է պրօլետարի խմբումը և հոգեկանը, երգում է նրա տգաւաթմարտի և հերոսական գործողութիւնների վսեմ արտայայտութիւնները: Դրանցով է բնորոշւում ըստ «Արշալոյսի ղողանջներ»-ի leitmotiv-ի, Կուրդիների դիրքն ու դերը մեր բանաստեղծական գրականութեան մէջ:

Ո՛ւր է որոնում մեր պօէտը իր գաղափարային թափառումների յենման կէտը, իր յոյզերի ու տենչանքների արտայայտութեան և կիրառման հանգստաբանը. սկսենք այդտեղից.

«Ինձ մի՛ սիրիր՝ որպէս գարնան

Բողբոջ ծաղկին քնքշօրէն.

Կամ տաքարին քո առնական

Վառ հեշտանքով կուրօրէն:

Թող որ քեզ հետ ես համարձակ

Ծծեմ թոյնը՝ տանջանքի.

Լինեմ ազատ, խօսեմ՝ արձակ,

Ձգտեմ լոյսին՝ փրկանքի:

Եւ ամենքի վշտին մօտիկ

Մտնեմ այն մեծ խաչի տակ,

Որ տանում են ըմբոստ մարդիկ

Դէպ ընդհանուր նպատակ»:

Եւ այլն:

(«Ինձ մի՛ սիրիր»):

Նոյն ձգտումը՝ այլ կապակցութեան մէջ և աւելի ուժեղ շեշտերով, կրկնւում է «Կը հիւսեմ երգեր» և «Ծա՛ր ինձ, մեծ հոսանք» բանաստեղծութիւնների մէջ: Ընթերցողը յիշում է, անշուշտ, էապէս նոյն եղանակը Ադա-Նեգրերի «Աշխատե՛լ ես դու» ոտանաւորի մէջ: Սակայն, մինչդեռ Ադա-Նեգրին՝ հաւատարիմ իր ընդհանուր ուղղութեան, հետևողականօրէն Ֆիզիքական աշխատանքի յատկանիշներ և հակումներ է որոնում իր սէրը հայցող անհատի արտաքինի և հոգեկանի մէջ,— Կուրդիներն, ընդհակառակը, իր հերթին՝ դարձեալ հաւատարիմ իր առաջնորդող եղանակին, հետևողականօրէն որոնում է իր սէրը հայցող անհատի մէջ գաղափարային դաշնակցութիւն և ոչ սիրային մեղմեղութիւններ. փափագում է մտնել «մեծ խաչի տակ» և «ըմբոստ մարդկանց» հետ նւիրել «ընդհանուր նպատակին»: Սակայն, բացի այդ տրամադրութիւնից, այդտեղ հնչում է մի այլ եղանակ ևս: Դա կանանց ազատագրական շարժման—ճորտացած կին սեռի պատմա-քաղաքական ազատագրման—եղանակն

է, որով տոգորւած, կինը կոչում է տղամարդուն՝ «թող որ քեզ հետ ես համարձակ ծծեմ թոյնը տանջանքի. լինեմ ազատ, խօսեմ՝ արձակ» և այլն: Մի այլ տեղ՝ «Մենք էլ միանա՞նք» գեղեցիկ բանաստեղծութեան մէջ, ժողովրդական բարբառով, կուրղինեանը արտայայտութիւն է տալիս ճնշւած կնոջ արթնացած ձայնին.

«Ա՛րի, քուրիկ ջան, մենք էլ միանանք,
էն մենծ, սուրբ կռուին էղնինք մասնակից.

Հերիք չդթայուած ու դերի մնանք
Դուժման մտքերով, շմած զրկանքից:

Թող էն բախտաւոր մեր տղայ-մարդիկ
Շատ չհպըրտնան, որ առաջ անցան,
էնոնք առանց մեզ, հաւատան, քուրիկ,
Թեզ տեղ չեն հասնի—կ'ընկնեն ցիրուցան»...

Եւ այլն:

Բարբառողը աշխատաւորուն հին-բանաւորուն է. ասել է՝ ոչ բիւրգերական կանանց, այլ պրօլետարական կանանց ներկայացուցիչը: Բուրժուական պարլամենտի կարկատան բարենորոգումներով չէ, որ պիտի լուծւի կին սեռի կնճռոտ հարցը, այլ վերջնիս ճակատագիրը անմիջապէս կախւած է ընդհանուր հասարակական հարցի լուծումից. այդ է պատճառը, որ մեր պօէտի ազատագիր կինը մարտական տոնով շեշտում է՝ «Ա՛րի, քուրիկ ջան, մենք էլ միանանք, էն մենծ, սուրբ կռուին էղնինք մասնակից...», — որպէսզի կին սեռը իր բաժին մասնակցութիւնն ունենայ սօցիալական հարցի լուծման նւիրւած գաստակարգային «սուրբ կռուի» ասպարիզում: Որ պրօլետարիատի երգիչը պէտք է ուշի ուշով արձագանք տայ և՛ ճնշւած

սեռի ազատագրական տենչանքներին, դա ըստինքեան հասկանալի է և պէտք է միայն սպասել, որ Շ. Կուրղինեանը նոյն ուղղութեամբ յաճախ կերգէ, ասելով մեզ աւելին, քան ասել է:

Եթէ պրօլետարիատի երգիչը, ինչպէս ասացինք, չէ տալիս մեզ դադափար աշտատանքի մասին, ապա կրկնակի յաջողութեամբ բանաստեղծում է նա աշխատաւորի գաղափարը: Այն, ինչ նա հաղորդում է ընթերցողների սրտին ու մտքին՝ «Բանտորնները», «Բանտորի երգը», «Հանգքէ՛ք ջահերը» և այլ բանաստեղծութիւնների մէջ, մտքերի տրամաբանական դասաւորութեամբ, ցայտուն արտայայտութիւններով և թովիչ հնչիւններով— ամենայաջողւած էջերից մէկը կարելի է համարել: Տնտեսական թշուա կացութիւն, հոգեկան յուզւած ու մաղձոտ դրութիւն, սօցիալ-քաղաքական կաշկանդւած վիճակ, քաղաքակրթական արգասաւոր դեր՝ կապիտալիստական արդիւնաբերութեան կեանքում,— հակիրճ ու ազդու տողերով այդ գաղափարն է տալիս մեզ պրօլետարիատի երգիչը աշխատաւորի մասին, այն աշխատաւորի, որ իր պատմական առաքելութեան խորին գիտակցութեամբ կոչում է՝

«Հա՛, մենք ենք գալիս—

Դարևոր վշտի զրկանքի բովից,

Հալածանքների, զարշ ստրկութեան

Մոռացուած խաւից—

Կրծքով փշրելու փառքը տիրողին,—

Դանձ բռնութեան—ստրուկի շղթան,—

Նոր ուղի հարթել մեր նմաններին,

Արժանի կոչման—հաւասարութեան՝

Այդպէս ենք գալիս»...

(«Բանուորները»):

Իսկ մի այլ տեղ բանւորը երգում է խրոխտ ու համարձակ՝

«Բաւ է, ընկերներ. պարզենք կոշտացած

Մեր ջլոտ ձեռքեր—

Յառաջ համարձակ, կեանքի մեծ բեմում՝

Փոխում են դերեր»...*)

(«Բանուորի երգը»):

Ակներե է, որ Կուրդինեանը չի բանաստեղծում առհասարակ աշխատաւորական կեանքի կայուն դրութիւնը, բանւորի հոգեկան սովորական բովանդակը, այլ գիտակից բանւորի յարաշարժ վիճակը, նրան՝ շարժման եռուն ընթացքի մէջ, նրա արեւոթման հոգեկանի անսովոր վայրկեանները:

«Կեանքի մեծ բեմում փոխւում են դերեր...».

Կուրդինեանը արտայայտում է երգող բանւորի բերանով հասարակափրիսոփայական այդ դասական միտքը, որով իմաստալից խոր բովանդակութիւն է ստանում նրա լակոնական արտայայտութիւնը: Երէկայ տիրապետողը գահընկեց է եղել, և, դերերը փոխւելով՝ երէկայ ճնշածը տիրապետում է այսօր. բայց դարձեալ դերերը փոխւելով պատմական հակադարձութեամբ, այսօրայ ճնշածը պիտի բնանհրաժեշտօրէն խորտակէ վաղը տիրապետողի փառքի կոթողները...— դասակարգային կուի պատմական ընթացքի բանաստեղծական ձևակերպումն է՝ «Կեանքի մեծ բեմում փոխւում են դերեր»—նշանակալից խօսքերը:

Սակայն պրօլետարիատի երգիչը հանդէս է գալիս

*) Ընդգծումը մերն է:

իր՝ կուրդինայինը ասել, առաւել իսկական դերի մէջ, երբ մէկը միւսի յետեից թերթում ենք նրա «ղօղանջներին» ազիտացիական-մարտական էջերը—ամենաուժեղ ու տպաւորիչ բանաստեղծութիւնները: Այդ ազիտացիան չունի ծրագրային այն բնաւորութիւնը, որ տեսանք Յակոբեանի մօտ: Այստեղ ամենահրատապ, ուշք ու միտք բեկուող խնդիրն է զբաղեցնում յարգելի բանաստեղծուհու մուսային, — քաղաքական ազատագրութեան կնճռոտ հարցն է այդ, որի տրմատական լուծումից արդէն կախած է ծրագրային շատ ու շատ պահանջների իրականացումը: Նա սկսում ու աւարտում է իր բանահիւսւածքը ազատութեան ղօղանջներով, որով մեր արթուն երգիչը մարտական յորդոր է կարդում վաղօրդեան լոյսին դիմաւորելու յուսավառ ձգտումներով տոգորւած ազատագրիչներին.

«Ղօղանջում են զանգակները... ղօղանջում են ամեն օր,

Տառապանքի կսկիծներից երգեր հիւսումահաւոր—

Տանջուած երկրի ցաւոտ կրծքից լմբոստ կռուի

կոչն ուժգին

Տարածւում է ամեն խաւում անհղ թափով՝ ա-

մենքին»...

(«Ազատութեան ղօղանջները»):

Կամ՝

«Յառաջ անվեհեր, յառաջ մինչև վերջ,

Սուրբ նպատակին միշտ հաւատարիմ—

Մահըն անմահ է արդար կռուի մէջ

Եւ ուխտատեղի՝ մարտիկի շիրիմ»...

(«Յառաջ անվեհեր»):

Պարզ է, անկասկած, որ քաղաքական ազատա-

գրութեան գերագոյն սկզբունքը կազմում է մեր պօէ-
տի առաջնորդող գաղափարը, նրա հոգուն տիրապե-
տող միտքը: Ագիտացիական-մարտական նման ներ-
բողներ՝ «Արշալոյսի ղողանջներ»-ի մէջ,—որքան կու-
զէք:

Կուրդիսեանի ստեղծագործող տաղանդը առանձ-
նապէս փայլում է այն էջերում, ուր նա խնամքով
նրբագծում է տանջող ու տառապող ազատագիր մար-
տիկի հոգեկան փոթորկայոյդ վայրկեանները—բանտում
շղթայակապ, կախաղանի վրայ, հրացանազարկից յե-
տոյ՝ թէ՛ այլ դժնդակ վիճակում: Հիանալի է այդ տե-
սակէտից «Կալանավորի երգը», ուր երկաթէ օղակնե-
րի մէջ տանջող ու հիւժուող կալանավորը սրտատրոփ
սպասում է վերահաս արշալոյսին և թունալից տոնով
դիմում «սեպացած ժանգոտ ու պաղ օղակներին»—իր
ոտերը կաշկանդող շղթային՝

«Լսում ես դրսից ներգաշնակ երգի

Աղմուկն յաղթական,

Նա է ցուցարար իմ ընկերներից՝

Քո դատը մահունան»:

Եւ այլն:

Սակայն Կուրդիսեանի «ղօղանջների» ամենա-
սքանչելի քերթւածքը կազմում է նրա՝ «Յե՛տ տա՛ր
քո խաչը» բանաստեղծութիւնը, որ առանձին փայլ
է տալիս բնոյթով նմանօրինակ էջերին: Այդ բանա-
ստեղծութիւնը՝ կուզենայինք ասել, կազմում է առա-
ջինը հաւասարների մէջ: Քաղաքական ամենասրտա-
ճմլիկ գործողութիւններից մէկի նկարագրութիւնն է
չորս էջից աւելի բոնող այդ գեղեցեկ բանահիւսւածքը:
Ազատագրական շարժման արիւնյաների պատմութեան

մի կենդանի, բանաստեղծած էջն է այդ կտորը: Ռէ-
ակցիայի բիւրաւոր սխրագործութիւնների բնորոշիչ
նմուշներից մէկն է այդ, որոնցով այնքան հարուստ
է մեր երկրի մարտիրոսագրութեան քրոնիկոնը: Իը-
նութեան տարերքների անբարբառ վշտակցութիւնը՝
առ կախաղան բարձրացող մահապարտ գոհը, վերջինս
Ֆիդիքական այլանդակութիւնը—ձեռ ու ոտով անդա-
մալուծւած ռումբի պայթումից,—և այնուամենայնիւ
նրա անվհատ, ըմբոստ ու անվեհեր հոգեկան վիճակը
և այլն,—այդ բոլորը նրբագծւած է քանքարաւոր գըր-
չով, ուժեղ զգացմունքներով: Երբ մտաւոր ստրկու-
թեան սեւազգեստ ներկայացուցիչը, դարաւոր քնէու-
թեան գործիքը՝ երկաթէ կտորը մօտեցնում է գերեզ-
ման իջնող քաջամարտիկ հերոսին համբուրելու, սա
այդ վերջին վայրկեանին իսկ՝ հոգու բոլոր արիւն-
թեամբ, խրոխտ ու աներկիւղ գոչում է ստորաքարշ
ծնունդի երեսին՝

«Յետ տար քո խաչը—գործիքն յարմար

Անվերջ կեղծիքի, լպիրշ քսութեան.

Անխախտ պատճառըն—արուած ոտնահար

Ամեն մի տենչի թշուառ մարդկութեան:

Յետ տար ազգերի տիտան կապանքի—

Վեհ ձգտումների, սուրբ ճշմարտութեան,

Գիտակից մտքի—ազատ վայելքի,

Շաղկապ իդէալի—հաւասարութեան,

Եւ սասանական անվերջ ջարդերին,

Անմեղ զոհերի անգութ սպառման՝

Վաղճեց կեղծուած ժանգոտ բանալին...

Յետ տար... նրանից արիւն է ծորում,

Վազում արցունքի, շարաւի հեղեղ,

Բիւրաւոր, անթիւ զոհերի լքում—
 Ղօղանջում մահուան նգովքով ահեղ»...

Եւ այլն:

Գանձ-քանի՜ անգամ են ազատագրական շարժման անվեհեր զինւորները այս և նման խօսքերով կշնքել իրենց մահկանացուն: Մուսայի «որսած» վայրկեանը աւելի քան իրական է, թարմ ու ժամանակակից. վերաբրտադրութիւնը՝ նուրբ ու տաղանդաւոր:

Գիտե՞նք մի տեղ, իր հանճարեղ քերթւածքի մէջ, իր համաշխարհային տիպի բերանն է դնում այս իմաստուն խօսքերը՝

«Wer für die Besten seiner
 Zeit gelebt,
 Der hat gelebt für alle Zeiten».

(Ով ապրում է իր ժամանակի լաւագոյնների համար, նա ապրում է բոլոր ժամանակների համար):

Այդ խօսքերը ամենից առաջ վերաբերում են դրականական գործիչներից նրանց, որոնք երգում, բանաստեղծում են զովքն ու գործքը իրենց «ժամանակի լաւագոյնների»։ որոնք ստեղծագործում են իրենց դրական տիպերը այդ «լաւագոյնների» մթնոլորտից, քաղում իրենց առաջնորդող երգը այդ «լաւագոյնների» արարքներից և «հաւատոյ հանգանակից»։ Իսկ «ժամանակի լաւագոյնները» նրանք են, որոնք մտածում ու գործում են ժամանակի հասարակական առաջադիմութեան տեսակէտից, մարտնչում են յանուն հասարակական վսեմ իդէալի, ձգտում են իրականացնելու այդ իդէալը:

Մեր թւած կրեք բանաստեղծները՝ Ադա-Նեգրի,

Յակոբեան և Կուրդինեան, ինչպէս տեսանք, երգիչներ են աշխատանքի և աշխատաւորի, ուրիշ խօսքով դա նշանակում է, որ նրանք երգիչներ են ժամանակակից քաղաքակրթութեան այն գործօնի և արդի հասարակութեան այն դասակարգի, որոնցով պայմանաւորւած է նորագոյն դարի սօցիալական առաջադիմութիւնը և որոնց պատմական գոյութեան սկզբունքային էութիւնից բխել ու հիմնաւորւել է ապագայում իրականանալիք հասարակական իդէալը: Հետեալէս մեր երգիչները՝ առաւել կամ պակաս տարբերութեամբ, ապրել ու ապրում են իրենց «ժամանակի լաւագոյն» տարրերի համար: Եւ դրա մէջ է կայանում նրանց բանաստեղծական ստեղծագործութեան գաղափարային պարունակութեան դրական ու մնայուն արժէքը: Սակայն, յատկապէս այդ գնահատական կշռաչափի տեսակէտից՝ մենք տեսանք արդէն ակներև փաստերով, որ Կուրդինեանը անհամեմատ բարձր է կանգնած: Նա ստեղծագծում է մեր առաջ կենդանի, շարժուն կեանքի ծոցից այնպիսի պատկերներ, սօցիալական կուր հնոցից այնպիսի էջեր, ուր «ժամանակի լաւագոյնները» — առաջխաղաց տարրերը — յուզւում ու փոթորկւում, պայքարում ու մարտնչում են ընդդէմ ժամանակի յետադիմական ոյժերի, յօգուտ ժամանակի հասարակական առաջադիմութեան: Նոյն չափով ու որակով այդ առաջնորդող ձգտումը տեղ չէ բռնում Ադա-Նեգրիի և Յակոբեանի երկերի մէջ:

Ամենագագալի թերութիւնը Կուրդինեանի «ղօղանջների» մէջ, ինչպէս նկատեցինք առաջ հարեանցօրէն, կազմում է աշխատանքային վայրկեանների վերաբրտադրութեան քաղաքային վայրկեանների վե-

նի երգ»-ից—երկրագործական-գիւղացիական աշխատանքի թոյլ բանաստեղծումից—չկան ժողովածւի մէջ ուրիշ ոտանաւորներ աշխատանքի վերաբերեալ: Մինչդեռ թէ որ աստիճան տնտեսական բաժին պիտի կազմէ բանւորի աշխատանքային կեանքը պրօլետարիատի երգչի բանաստեղծական հիւսւածքի մէջ, դա բացատրութեան տնկարօտ մի ակնյայտնի պահանջ է: Թէ որքան կարևոր է և կըթիչ նշանակութիւն ունի զանազան ճիւղերի աշխատանքային կեանքի բազմատեսակ երևոյթների բանաստեղծումը, ապա՝ արհեստանոցում, գործարանում, թէ դաշտի մէջ աշխատանքի բովում կոփւող ու կաղապարող բանւորական հոգեբանութեան նրբագծումը,—դա ևս ակնհերձ է:

Սակայն non omnia possumus omnes... և այդ թերութեան փաստը մեղմանում է, եթէ ինկատի ունենանք այն հանգամանքը, որ նախ՝ Կուրդինեանի գրքոյկը իր վերնագրի տակ չէ յայտարարում որ և է յաւակնութիւն, չնչպէս Յակոբեանի գրքոյկն է, լինելու կամ տալու մեզ աշխատանքի երգեր. երկրորդ՝ մեր բանաստեղծուհու ուշադրութիւնը այնքան է գրաւած աւելի հոռւն ու թռիչքային, աւելի թարմ, ժամանակակից ու կենսալիւր երևոյթներով՝ ներկայի իրականութեան, որ նա անկարող էր հոգեբանօրէն՝ հաւասար կամ գրեթէ հաւասար չափով երգել ու բանաստեղծել աշխատանքային կեանքի համեմատաբար խաղաղ ու համընթաց ելեէջները: Այնպէս որ երկտասարդ բանաստեղծուհին իրաւունք ունի պարզերես ասելու՝ արել եմ, ինչ կարողացել եմ:

Մեր սպասելիքները երիտասարդ բանաստեղծուհուց՝ թոյլ ենք տալիս մեզ նկատելու, շատ են: Այո,

մենք շատ բան ենք սպասում Կուրդինեանի նորագոյն թղթաղանդի ապագայ բեղմնաւորութիւնից: Մենք համարձակոււմ ենք սպասելու, որ նա՝ պրօլետարիատի երգիչը, կդառնայ ապագայում և՛ աշխատանքի երգիչ՝ էլ աւելի ընդարձակ ծաւալով և բարձր որակով, քան իտալական բանաստեղծուհին է: Հայ բանաստեղծուհու ստեղծագործական ձիրքը տալիս է սպասելիքների այդ գրաւականը: Բացի այդ, Կուրդինեանը ունի այն խոշոր պլուսը, որ նա պրօլետարիատի բանաստեղծ—գաղափարախօսն է, նրա մարտական ձգտումների յեղափոխական երգիչը,—մի հանգամանք, որից զուրկ է ընդհանրապէս մանր-բուրժուական փափկազգաց դեմօկրատ Ադա-Նեգրին: Եւ եթէ վերջինս մէջ դժբաղդաբար այնքան վաղաժամ մարել է բանաստեղծական կայծը,—երևի, գլխաւորապէս, կանացի այնքան սովորական տիպերի քաղքենիական շրջանի խաբուսիկ հրապոյրներին կուլ գնալու պատճառով՝ հարուստ փեսացւի հետ ամուսնանալուց յետոյ,—ապա Կուրդինեանի մօտ, սիրում ենք հաւատալ, բանաստեղծական քանքարը առաջ կընթանայ անարգել իր աստիճանական դարգացման շաւղով. իսկ տառապող դասակարգի ազատագրական ոգին միշտ կըոցավառէ և կհուրհրատէ նրա զգացմունքները՝ ստեղծագործելու և հրաշակելու նրա կեանքի բազմատեսակ կողմերից շատ աւելին, քան նոյն իսկ սպասել կարող էինք:

V.

Գրւածքիս վերջում կկամենայինք մի կարևոր կէտի վերաբերեալ փոքրիկ նմանութիւն անել Ադա-Նեգրիի և Կուրդինեանի բանաստեղծութիւնների մի

բնորոշ կէտի նկատմամբ և տալ նրա համառօտ լուսաբանութիւնը:

Մէկի թէ միւսի մօտ, մանաւանդ Ադա-Նեգրիի պրակներում, յաճախ է կրկնւում, երբեմն շատ ուժեղ տոնով, վշտի եղանակը: Վիշտ, տանջանք, կսկիծ ու տառապանք կազմում են իտալացի և հայ բանաստեղծութիւնների հիւսած երգերի սիրած նւագները: Մի քանի նմուշներ կտան մեզ գաղափար դրանց մասին. Ադա-Նեգրին երգում է՝

«Նա է փառքի լոկ արժանի,
Որը խոցուած սրտի խորքում բիւր վշտերի սպի
ունի,

Յաղթութիւնը մարտի դաշտում տանում է միշտ
քաջ զինուորը,

Տառապանքն է, որ սրբում է մտքի ազնիւ ճա-
նապարհը»:

(«Ճակատագիր»):

«Տանջուել ու տոկալ, չէ՞ որ ասել է՝ ապ-
րել ու դգալ»...

(«Անմահը»):

«Եւ վիշտը անմեռ ու հոգսը յաւերժ յաւի-
տենական»:

(«Առանց յանգերի»):

«Կեցցէ կրակը, որ աւերում է,

Ձնջում աշխարհից չարիքը կեանքի—

Որ հալածելով իր հետ տանում է

Տազնապը քաղցի ու տառապանքի.

Որ անյայտութեան մատնելով մարմին,

Հանգիստ է բերում լքման զոհերին»:

(«Հրդեհ հանքերում»):

Կուրդիներն զրքոյլի մէջ կարդում ենք՝

«Կեցցէ տանջանքը, որ համբերութեան

Ակըն անսպառ իսպառ չորացրեց.

Սողալուն սովոր անխորտակ հակման

Ծիւրն անարգ մեր սրտից ջնջեց:

Կեցցեն կառաւիներ, մտրակ, կախաղան,

Սովալլուկ ամբօխ, և՛ կարիք, և՛ հաց,

Արեան հեղեղներ, ուր կեանքի գարնան

Շողերն յուսոյ մեր դէմ շողշողաց:

Կեցցէ մարդկութեան տանջանքի երկունք,

Նոր գաղափարի ծնունդն արդար,

Էլ չենք խոնարհի մենք վիզ ու թիկունք—

Հա, սողում էինք, բայց էլ չենք սողար»...

(«Կեսանքի դասը»):

Բերած նմուշները աւելի քան պարզօրէն վկա-
յում են, թէ որքան կարեւոր տեղ է բռնում վշտի ե-
ղանակը Ադա-Նեգրիի և Կուրդիներն հոգեկան ծալ-
քերում: Թէ որքան նման ինքնների և կապակցու-
թիւնների մէջ, անգամ նման արտայայտութիւններով
և նոյն իմաստով է գործածւում այդ եղանակը երկու-
սի մօտ, դա ակնյայտօրէն նկատելի է վերև բերած
կտորների մէջ: «Տառապանքն է, որ սրբում է մտքի
ազնիւ ճանապարհը»—ասում է մէկը: «Կեցցէ մարդ-
կութեան տանջանքի երկունք», որովհետև նա «նոր
արդար գաղափարի ծնունդն է»—ասում է միւսը:
«Վիշտը անմեռ է», «Կեցցէ աշխարհի չարիքը ջնջող
կրակը»—կոչում է մէկը: «Կեցցէ համբերութեան ակը
իսպառ չորացնող տանջանքը»—կոչում է միւսը: Մօ-
տիւր իր յստակութեամբ գործ է ածւում մէկի թէ
միւսի կողմից միեւնոյն գաղափարային իմաստով,

միեւնոյն արժէքով:

Բայց ի՞նչ է նշանակում այդ, որն է այդքան ուժեղ հնչող եղանակի գոյութեան անհրաժեշտ պայմանը: Չկայ կեանք՝ առանց մահւան, չկայ ուրախութիւն՝ առանց վշտի, չկայ ծիծաղ՝ առանց լացի, չկայ հանգիստ, անդորր երջանկութիւն՝ առանց տանջալից ու տառապալից դժբաղդութեան, չկայ վայելք ու բաւականութիւն՝ առանց տանջանքի ու զոհողութեան և այլն և այլն: Յաճախ է կրկնուել և շատերից երգուել փիլիսոփայական այդ ասացւածքը: Չկայ հարստութիւն՝ առանց մասսայական չքաւորութեան, չկայ շահագործող՝ առանց շահագործուողի, չկայ տիրապետող՝ առանց տիրապետողի կամ ենթարկւողի, — կարելի է անվերջ շարունակել այդ հակապատկեր երևոյթների և հասկացողութիւնների շարքը:

Դա կեանքի բոլորների և հոգեկան տարեւրքների յարաշարժ ընթացքն է, իր դիալեկտիքական հակադարձութեամբ: Դա օրգանական և սօցիալ-պատմական կեանքի դրական ու բացասական տարրերի յարաճուն ու յարարժէք պայքարն է, — օրգանական կեանքի զարգացման և մարդկային հասարակութեան առաջադիմութեան առաջ-մղիչ խթանը:

Որոշ դրական երեւոյթի գոյութեան և տեսանութեան հնարաւորութիւնը պայմանաւորւած է «համապատասխան» բացասական երեւոյթի գոյութեամբ: Մէկը գտնուում է միւսի հետ զործակցական յարաբերութեան մէջ: Դրականն ու բացասականը կազմում են միեւնոյն ամբողջական մեծութեան տարրեր կողմերը: Օրինակ՝ կապիտալիստական արդիւնաբերութիւնը ստեղծագործելով նորագոյն հասարակութեան ծոցում

չնաշխարհիկ դրական քաղաքակրթութիւն, միաժամանակ, դիալեկտիքական անհրաժեշտութեամբ, տոն է տւել բացասական երևոյթների մի նմանը չեղած վիթխարի կառուցւածքի, որին անծանօթ է պատմութեան նախակապիտալիստական շրջանը: Նորագոյն ունեւորի (կամ ունեւորների դասի) կապիտալիստական հարստութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ նիւթական (դրական) բարեքնքի կուտակումը՝ չունեւորների մասսայական շահագործութեան հաշւին, դառն չքաւորութեան (բացասական երևոյթի) գնով: Եթէ մի տեղ թագաւորում է հանգիստ ու անդորր երջանկութիւն, ուրախ վայելքների և անհոգ ինքնաբաւականութեան ամենաբարձր աստիճանը, — դա շնորհիւ այն օրիեկտիւ պայմանների, որովհետեւ մի այլ տեղ, սանդուխքի հակառակ ծայրում, իշխում է այդ դրականի բացասական կողմը՝ հանուր չքաւորութիւն, տանջանք ու տառապանք, դառն վշտերով ու զրկանքներով լի մի եղկելի վիճակ:

Սակայն ինքը բացասականը, իր հերթին, այլ բան չէ, բայց եթէ բացասող տարրերի մի համագումար, տրամագծօրէն ուղղւած դրական դրութեան գոյութեան հիմքերի դէմ: Բացասող տարրերը՝ օրգանական թէ հասարակական կեանքում, պարունակում են իրենց մէջ տիրող կանգուն-դրական դրութեան յեղաշրջման քայքայիչ բացիլները:

Բայց ի՞նչ իրական-նիւթական աղբիւրից է իր սկիզբն առնում բացասող տարրերի — ասենք՝ օրինակ, հասարակական խմբակների — յեղափոխականութեան իդէօլոգիան: — Տնտեսական շահագործութեան, նիւթական թշուառ ու ճնշւած կացութեան այն մթնոլոր-

դում, ուր հասարակական դժնդակ չարիքը լճանում և տարերային ուժգնութեամբ մի ելք է որոնում: Մարդկային սեռի հոգեկան վիճակը՝ այդ միջավայրում, վշտի ու կսկիծի, տանճանքի ու տառապանքի տխուր ծալքերի մի աղեխարշ հիւսւածք է՝ իր բաղմբերանգ արտայայտութիւններով:

Ահա այդ օրիկտիւ պայմանների իրական հիմքերից, բացասական երեոյթների շօշափելի արմատներից գոյանում է զաղափարային երկունքը, ծնունդ են առնում իդէական սաղմեր և հասարակական ոյժեր, որոնք պատմականօրէն կոչւած են կրծելու և փորփորելու գրական դրութեան իրական կուսնները: «Իբժբաղը» բացասականը դառնում է մի մարմնացած բողոք, մի աննահանջ ըմբոստացում, մի սպառնացող վտանգ՝ ուղղւած տիրապետող «երջանիկ» դրականի դէմ:

Առաջ է ցցւում կնճռոտ հանգոյցը. — գոյութիւն ունեցող սրբազործւած հասարակակարգի (դրականի) և՛ ըստ նոր հասարակական իդէալի, նրա յեղաշրջման (բացասման) յարաբերութեան հարցը. հին յետադէմ գործօնների և նոր առաջադէմ ոյժերի անհաշտ մաքուման ընթացքը:

Այդ բնաւորութեամբ և այդ ճանապարհով է ընթացել հասարակական կեանքի պատմական ուղին: Եւ մենք կամեցանք այս թուղցիկ ակնարկներով միայն պարզել, թէ ինչ իմաստով պիտի հասկանալ մեր բանաստեղծ հեղինակների անխնայ ներբողները՝ կեանքի բացասական երեոյթների հասցէին: Մենք տեսանք արդէն մեր դիտողութիւնների ընթացքում, որ նրանք բանաստեղծական արտայայտիչներն են այն դասակարգի, որի աշխատանքային և տնտեսական ու հա-

սարակական-հոգեկան կեանքի բաղմատեսակ վայրկեանների բովանդակութիւնը ներկայացնում է տառապալից զրկանքների ու տանջանքների, վշտերի ու կսկիծների մի ողբերգական տեսարան: Եւ սակայն, որքան էլ այդ դժնդակ վայրկեանները իրենց ամբողջ թափով մաշեն, հիւժեն ու թունաւորեն աշխատաւորութեան աւօրեայ կեանքը, այնուամենայնիւ նրանք են, որ օրիկտիւ հող են պատրաստում ազատագրութեան գաղափարային երկունքի համար. այդ դառնալից կեանքի կապարեայ ծանրութիւնն է, որ սկզբնական իսթսն է ծառայում բանւորութեան տարերային բռնկումների և ընազդային ըմբոստացումների: Իսկ վերջիններս այնպիսի պայմաններ են, որոնք, իրենց հերթին, առաջ են մղում բնազդային—տարերային հողի վրայ պայքարողներին՝ մարտնչելու կազմակերպւած—գիտակցական հողի վրայ, ծրագրային ճանապարհով. ասել է՝ խմորում են նրանց միտքը՝ դիւրութեամբ ըմբռնելու իրենց դասակարգային հասարակական իդէալը հիմնաւորող աշխարհահայեացքը:

Եթէ Ադա-Նեգրին և Կուրդիներն այնքան ներդաշնակօրէն հնչեցնում են վշտի եղանակը, երգում մարդկային տանջանքն ու տառապանքը, որպէս՝ «նոր արդար գաղափարի ծնունդ», որ «սրբում է ազնիւ մտքի ճանապարհը», ապա դրանք բանաստեղծօրէն ձեւակերպւած լակոնական արտայայտութիւններ են, որոնց իմաստի փիլիսոփայական բացատրութիւնը այլ չէ, քան այն, ինչ տեսանք մենք վերև: Սակայն մենք վախենում ենք, որ բանաստեղծական այդ լակոնիզմը թիւրիմաց եզրակացութիւնների տեղիք տալ, չհասկացւի գաղափարը իր ճիշտ իմաստով, ուստի

կարևոր է մի փոքրիկ լրացումն էս:

Չպէտք է երկու ներութիւններ միմեանց հետ շփոթել: Մեր հեղինակները չեն երգում ու փառաբանում այդ բացասական երևոյթները՝ վիշտ, տանջանք, տառապանք և այլն, որպէս իղէալական-երանսական դրութիւն, որպէս մի բան, որ ցանկալի է, որին ձեռք տեղ ու հասնել է հարկաւոր: Եթէ նրանք այդ մտքով բանաստեղծէին, այն ժամանակ չէին համարել, բնականօրէն, աշխատանքի և աշխատաւոր-պրօլետարիեր-գիշներ, նրանց ազատագրելու և բարեբաստիկ կեանք վարելու իղձերի արտայայտիչներ, այլ նրանք կփայփայէին աշխատաւորի չարքաշ ու թշուառ կացութիւնը՝ որպէս այդպիսին, որպէս հասնելու արժանի և նախանձելի մի իղէալ և կյորդորէին հասարակութեան միւս՝ քաղաքակրթութեան տեսակէտից բարձր ու բարեկեցիկ, հատաճներին՝ մի անագորոյն ըէակցի-այով յետ մղելու դէպի բանւորական-գիւղացիական աշխարհը:

Ամենեւին ոչ: Մեր հեղինակները, բարեբաղդաբար, շատ հեռու են միջնադարեան ճգնապաշտութեան և ռուսոյական-սոլստոյական քաղաքակրթութիւն աւտող ձգտումներ երգելու տրամադրութիւնից: Նրանք դրւատում են այդ բացասական երևոյթները, սոսկ որպէս միջոցներ, որոնք տարերային ուժգնութեամբ հրում են ճնշածին ու զրկածին դէպի գոյութեան կուրի դաշտը՝ ընդդէմ ճնշողի, զրկողի ու բռնացողի: Նրանք բանաստեղծում են վիշտն ու տանջանքը, որպէս խթաններ, որոնք առաջ են մղում բանւորութեան դէպի նոր գաղափարների և իղէալների աշխարհը, սոցորւելու իրենց ազատագրութեան փայլուն հեռան-

կարներով. որպէս օրինակաւ պայմաններ, որոնք դարձնում են հասարակութեան ստորին խաւին բացասող տարրեր, հասարակական քաղաքիչ բացիւլներ՝ ուղղած վերին դասի տիրապետող հասարակարգի գոյութեան իրական հիմքերի դէմ:

Ով մտածում, ծրագրում, գործում, պայքարում ու մարտնչում է յանուն նոր գաղափարների իրականացման, լաւագոյն ապագայի և ընդդէմ տիրող հին ու փթած կարգերի, նա՝ տարակոյս չկայ, բամում է դառնութեան բաժակը, հերոսական ճիգ ու ջանքերի ուղեկցութեամբ հարթում է փշոտ ուղին, մաշում տառապալից զրկանքների ու զոհողութիւնների մի բացառիկ դրութիւն: Ad angusta per angusta — ասում է լատինական առածը. անկարելի է ձգտել ու հասնել նպատակի, առանց երկար տարածութեան վրայ փրւած խոշորոտները վերացնելու:

Եւ եթէ այս բոլորից հետևում է այն, որ գաղափարի զոհը պէտք է անխուսափելիօրէն տոկայ ու տանջւի, ապա միւս կողմից հետևում է նաեւ այն, որ ազատագրութեան մտածող ու ծրագրող մարտիկները ծագում են սովորաբար այն մթնոլորտից, այն հասարակական միջավայրից, ուր տիրում են ճակատագրօրէն չքաւորութիւն, ճնշում ու տանջանք, վիշտ ու տառապանք—բացասական վայրկեանների ողբերգական հիւսածքը: «Я жить хочу, чтобъ мыслить и страдать»,—գա ճակատագրական նշանաբանն է ամեն մի հասարակական գործչի, ով մտածում, տանջւում, հետևաբար՝ և մարտնչում է յանուն տառապող դասակարգի հասարակական իղէալի: Վայելքների և խրախճանքների փարթամ ծոցում սնւած ու աճած բուրժու-

ական ինքնագոհունակ սերունդը ոչ մտածում, ոչ տանջւում և ոչ մարտնչում է նոր գաղափարների, հասարակական նոր իդէալի անունով, որովհետեւ նրա համար նոյնքան անծանօթ է կարիքների աշխարհը, որքան օտար է նրանց հոգեկան կեանքի համար տանջւելն ու տոկալը: Նա չի մարտնչում, ասում ենք, այն հասարակ պատճառով, որովհետեւ նրա հասարակական միջավայրում իշխում են ոչ թէ բացասական, այլ դրական վայրկեանները—նա վայելում է անարգել ու անսահմանափակ՝ փառահեղ քաղաքակրթութեան բոլոր նորագոյն բարիքները, չի մարտնչում, որովհետեւ իր նախնիքներն արդէն՝ կարիքի ու պատմական անհրաժեշտութեան թելադրանքով, վաղուց են մարտնչել և փաստացի իրականացրել բուրժուազիայի հասարակական իդէալը:


Թէ Ադա-Նեգրիի և թէ Կուրդինեանի մօտ կան այսպիսի արտայայտութիւններ՝ «Կեցցէ՛ կրակը, որ տւերում է...», «Կեցցեն՝ կառափներ, մտրակ, կախաղան...» և այլն: Այս արտայայտութիւնները աւելի քան «Կեցցէ՛ վիշտն ու տանջանքը», կարող են արտաքին հայեացքից խոշոր թիւրիմացութեան առիթ տալ: Սակայն այդ երևոյթները ուրիշ բան չեն, բայց եթէ բացասական երևոյթներէ խորհրդանշաններ՝ գործածւած պայմանական իմաստով: «Կառափները, մըտրակը, կախաղանը, ամբօխի սովալլուկ» վիճակը և այլն—դրանք չեն, ըստինքեան վերցրած, որպէս այդպիսիք, «Կեցցէ՛» կոչին արժանի պայմանները, այլ դրանք «ցանկալի» են միայն այնքան, որքան ճնշելով, բռնանալով՝ քրիստոնէական համբերատարութեամբ վիզը ծռած «սովալլուկ ամբօխի» վրայ, առաջ են բերում

վերջնիս մէջ ըմբոստ դիմադրութիւն, հուժկու բողոք, բռնկումներ ընդդէմ «մտրակի» և «կախաղանի» բռնակալ հեղինակների, գիտակցական-քննադատական լրջմիտ վերաբերմունք դէպի իր պատմական դիրքն ու դերը՝ տիրապետող կարգերի ներքոյ, զարգացման տւեալ շրջանում:

Որքան խիստ լինեն ճնշումները, այնքան շուտ կարթնանայ և գիտակցութեան կզայ դրանց ծանրութեան տակ տնքացող մասսան,—այդ սօցիալ-պատմական առածի իմաստով պիտի հասկանալ մեր հեղինակների դրատական երգը, ուղղւած վերոյիշեալ բացասական երևոյթների հասցէին:

Մենք նկատեցինք մի տեղ, որ ոմանք Կուրդինեանին համարում են հայկական Ադա-Նեգրին և աւելացրինք, որ դա ճիշտ է միայն արտաքին հայեացքից—ինկատի ունենալով նրանց leitmotiv-ների էական տարբերութիւնը: Սակայն վշտի մօտիւի մեր համառօտ վերլուծումը ցոյց տւեց, որ նրանք միմեանց ձայնակցում են այդ կարևոր կէտում եւ: Այժմ հարց է ծագում, բնականօրէն, արդե՞ծք ազդեւ է Կուրդինեանը Ադա-Նեգրիից: Մենք կարծում ենք՝ այո: Բայց եթէ եղել է այդպիսի ազդեցութիւն—դա չափաւոր է և միայն դրական կողմերից: Եւ լաւ է, որ Կուրդինեանը ազդեւ է այդ կողմերից: Կարող ենք համարձակ ասել, որ ազդւողը յետ չի մնում ազդողից նոյն իսկ այդ տեսակէտից:

1908 թ.





Грѣхъ 5 20 4.

Грѣхъ — Ростовъ н.-Д. Б. Са-
довая, 47. Гайку Авакьянцъ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0370715

63.859

